

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 01.03.2023թ. չորեքշաբթի թիվ 9 (1086)

## Անդրանիկ

## Ցեղասպանություն



Ամեն հայ ունի իր **Արարատը**: Եվ որքան էլ փորձես գեղեցիկ ու դիպուկ նկարագրել, թե ինչ է **Արարատը** հայի համար, միեւնույնն է, քո նկարագրությունը միշտ էլ զիջելու է այն **Արարատին**, որ կա յուրաքանչյուր հայի հոգում: Ծիշտ այդպես էլ յուրաքանչյուր հայ ունի իր **Անդրանիկը**... Երբ ասում ենք՝ **արքա**, անմիջապես պատկերացնում ենք **Տիգրան Մեծին**: Ասում ենք՝ **սպարապետ**, պատկերացնում ենք նախ **Վարդան Մամիկոնյանին**: Ասում ենք՝ **զորավար**, հառնում է **Անդրանիկի** կերպարը:

Փետրվարի 25-ին **Ջորավարը** դարձավ 158 տարեկան: **Անդրանիկ Օզանյան**՝ հայոց փառաբանված ազգային հերոսը, ով ոչ մի ճակատամարտ տանուլ չի տվել, ով անհամեմատելի, աներեւակայելի սխրանքների շնորհիվ՝ կենդանության օրոք արդեն իսկ լեգենդ էր, ում ժողովուրդը սիրում է, ինչպես իր եպոսի քաջագուններին, զորավար, ում նվիրված երգերը երգում էր անգամ թշնամին... Բայց՝ չջարունակեմ: Չփորձեմ նկարագրել, թե ով է **Անդրանիկը** հայոց համար, որովհետև, միեւնույնն է, ինչպիսի **Անդրանիկ** էլ որ պատկերեն, յուրաքանչյուր հայի մտքում, սրտում ու հոգում կա ավելի կենդանի, ավելի պայծառ ու ավելի հզոր **Անդրանիկ**: Միայն, մեծ զորավարի ծննդյան տարեդարձի առթիվ, կրկնեմ ութ տարի առաջ Ջորավարի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված մեր հրապարակման մեջ արված առաջարկությունը: Մեզանում կա ավանդույթ, հատկապես՝ համապատասխան եկեղեցական տոների օրերին, սրբազան մասունքներ դուրս բերել **Մայր Աթոռի** գանձատնից կամ **Մատենադարանից**, դնել եկեղեցիներում կամ այլ սրահներում՝ հրապարակային ներկայացման եւ հաղորդակցման համար: Ծիշտ այդպես էլ, յուրաքանչյուր տարի՝ Ջորավարի ծննդյան օրը, կարելի է **Անդրանիկի** թրերը դուրս բերել թանգարաններից, տեղափոխել զորամասից զորամաս, ցուցադրել, հնարավորություն տալ Հայոց բանակի զինվորներին՝ հավելու, հաղորդակցվելու այդ մասունքներին՝ զուգահեռ կազմակերպելով երդման արարողություններ կամ այլ միջոցառումներ: Կարելի է նաև **Անդրանիկի** հանրահայտ թրերի կրկնօրինակներով պարզեւստրել ծառայության մեջ աչքի ընկած սպաներին: Կարծում եմ՝ բարոյահոգեբանական զորեղ լիցքեր պարունակող նման ձեռնարկումները կլինեն բացառիկ խորհրդանշական. Ջորավարի թրերը կդադարեն միայն թանգարանային մոուզեներ լինելուց եւ կշարունակեն ծառայել Հայրենիքին:

Գ. Մ. տե՛ս՝ նաև էջ 8-11

## Հարգանքի տուրք՝ Սումգայիթի ոճրագործության զոհերի հիշատակին

1988 թվականի փետրվարի 27-29-ը Սումգայիթ քաղաքում իրականացված հայերի ջարդերի 35-րդ տարելիցի կապակցությամբ՝ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատրյանի**, Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանի** եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել ոճրագործության զոհերի հիշատակին:

Վարչապետը ծաղկեպսակ է դրել եւ ծաղիկներ խոնարհել զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններին:



## Հանրապետության նախագահ Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ուղերձը՝ սումգայիթյան ողբերգության 35-րդ տարելիցի կապակցությամբ



Սիրելի՛ հայրենակիցներ, Այսօր մենք ոգեկոչում ենք 1988 թվականին Սումգայիթ քաղաքում կազմակերպված հայկական ջարդերի զոհերի հիշատակը: 35 տարի առաջ տեղի ունեցած այս արյունալի իրադարձություններն ակնհայտ դարձրեցին աղբյուրահեղ իշխանությունների որդեգրած քաղաքականությունը, որի նպատակը սեփական տանն ապրող եւ արարող հայերի բռնի տեղահանումն ու ունեզրկումն էր:

Դեռևս Սումգայիթի ողբերգության անպատժելիության հետեւանքով կարճ ժամանակ անց նմանօրինակ բարբարոսություններ սանձազերծվեցին Բաքվում, Գանձակում եւ այլուր եւ ըստ էության, աղբյուրահեղ իշխանությունները փորձեցին էթնիկ զտման իրենց քաղաքականությունն իրականացնել նաև Լեռնային Ղարաբաղում՝ հարուցելով մեր հայրենակիցների արդարացի բողոքն ու դիմադրությունը:

Արցախի մեր հայրենակիցները ոտքի կանգնեցին իրենց հազարամյա հայրենիքում խաղաղ ու անվտանգ ապրելու անբակտելի իրավունքների համար, եւ այդ պայքարը շարունակվում է մինչ օրս: Սումգայիթյան ողբերգությունից 35 տարի անց, ցավոք, արցախահայությունը կրկին կանգնած է իր տանը, իր հայրենիքում ապրելու իրավունքների պաշտպանության համարվանում:

Սիրելի՛ հայրենակիցներ, Աշխարհասփյուռ հայություն, Դարեր շարունակ մեր ժողովուրդը ճաշակել է եւ հաղթանակի բերկրանքը, եւ կորուստների դառնությունը, բայց մեր ժողովուրդը երբեք չի ձգտել պատերազմի, այլ փորձել է խաղաղ ապրել ու արարել իր տանը, հայրենիքում, իր ավունով ու ստեղծագործ ջանքով՝ լավագույնս գիտակցելով եւ պատերազմի, եւ խաղաղության գինը, գիտակցելով նաև, որ պատերազմների արհավիրքում հաղթողներ չեն լինում:

Այսօր մենք, խոնարհվելով սումգայիթյան ողբերգության անմեղ զոհերի հիշատակի առաջ, առավել քան երբևէ, պետք է միասնական ջանքով ի ցույց դնենք մեր անկոտրում կամքը՝ պաշտպանել իրենց հնամենի հայրենիքում խաղաղ ու անվտանգ ապրելու Արցախի մեր հայրենակիցների անբեկանելի իրավունքները, պիտի մեկտեղենք մեր միասնական ներուժն ու կորովը՝ հանուն մեր քաղաքացիների, հանուն մեր սերունդների անվտանգ ու խաղաղ ապագայի:

Խաղաղություն մեր ժողովրդին, ամուր կամք ու բարօրություն Արցախի մեր հայրենակիցներին:

Բարի լուր

Հայ-իրանական

Հերթական ոսկին

Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Արթուր Գավթյանը հաղթող է ճանաչվել սպորտային մարմնամարզության առանձին գործիքների աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլում՝ հենացատկի եզրափակչում վաստակելով 15.133 միավոր եւ դառնալով ոսկե մեդալակիր:



Գերմանիայի Կոտբուս քաղաքում ավարտված առանձին գործիքների աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլում Հայաստանի ներկայացուցիչները եւս երկու մեդալ են նվաճել:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ, երիտասարդ մարմնամարզիկ Գագիկ Խաչիկյանն առաջին մեդալ է նվաճել մեծահասակների պայքարում: Նժույգթափերի վարժությունում նա գրավել է երկրորդ տեղը՝ եզրափակչում վաստակելով 14.833 միավոր:

30-րդ ամառային համաշխարհային ուսանողական խաղերի չեմպիոն, Համաշխարհային բանակային խաղերի եւ աշխարհի գավաթի խաղարկության բրոնզե մեդալակիր (2019 թ), ինչպես նաեւ 2022 թ. աշխարհի գավաթի խաղարկության արծաթե մեդալակիր Արթուր Ավետիսյանն էլ բրոնզե մեդալ է նվաճել օղակների վարժությունում վաստակած 14.533 միավորով: Այս վարժությունում Հայաստանի մյուս ներկայացուցիչ Վահագն Գավթյանը չորրորդ տեղն է գրավել (14.500):

«Տարին հաջող սկսեցինք, ինչի համար շատ ուրախ ենք: Առավել ուրախացել ենք Գագիկ Խաչիկյանի համար, որը մեծահասակների պայքարում առաջին մեդալը նվաճեց: Շատ բարոյ մրցում էր, գրեթե բոլոր ուժեղագույնները մասնակցում էին: Շատ ուրախ եմ, որ ստացվեց մեդալակիր դառնալ», - ասել է Արթուր Ավետիսյանը:

Սպորտային մարմնամարզության Հայաստանի հավաքականն աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլին մասնակցում էր մարզիչներ Սոս Սարգսյանի եւ Հայկ Նազարյանի գլխավորությամբ: Հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանն ընդգրկված էր մրցաշարի մրցավարական թիմում:

Աշխարհի գավաթի խաղարկությունը վարկանիշային է աշնանը Բելգիայում անցկացվելիք աշխարհի առաջնության առանձին գործիքների մրցման համար, որի ընթացքում կխաղարկվեն Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգրերը:

Աշխարհի գավաթի երկրորդ փուլը տեղի է ունենալու մարտի 1-ից 5-ը, Կատարի մայրաքաղաք Դոհայում, որին Հայաստանը ներկայացուցիչները եւս կմասնակցեն:

Քննարկվել են համատեղ կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հայի, աշխատանքի եւ սոցիալական բարեկեցության նախարար Սեյեդ Սուլայթ Մորթազավիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը, Արաքսիա Սվաջյանը, ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրին:

Ժաննա Անդրեասյանը ողջունել է ԻԻՀ կոոպերացիայի, աշխատանքի եւ սոցիալական բարեկեցության նախարարի եւ պատվիրակության այցը ԿԳՄՍ նախարարություն կարելու երկու երկրների միջեւ բարեկամական համագործակցությունը: ԿԳՄՍ նախարարը վերահաստատել է հայկական կողմի պատրաստակամությունն ակտիվացնելու փոխգործակցությունը՝ հայ-իրանական փոխհարաբերությունները որակական նոր աստիճանի բարձրացնելու նպատակով:

«Մեր երկրների միջեւ համագործակցության շրջանակը շատ լայն է, արդեն իսկ բազմաթիվ հուշագրեր եւ համագործակցության պայմանագրեր են առկա մեր երկրների միջեւ՝ տարբեր ոլորտներում: Պատրաստ ենք քննարկել համագործակցության նոր հեռանկարներ եւս: Գիտենք, որ համակարգում եք նաեւ տեխնիկական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտը: Մեզ համար դա կրթության առաջնահերթ ուղղություններից է, եւ պատրաստ ենք քննարկել համագործակցության հեռանկարները նաեւ այդ ուղղությամբ», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հայի, աշխատանքի եւ սոցիալական բարեկեցության նախարար Սեյեդ Սուլայթ Մորթազավին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ կարելու հատկապես կրթության ոլորտում Հայաստանի հետ համագործակցության հեռանկարները: Նախարարը ներկայացրել է տեխնիկական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում իրանական փորձը՝ պատրաստակամություն հայտնելով այն նաեւ



հայկական կողմի հետ կիսելու. «Մեր բարեկամ երկրին՝ Հայաստանին, պատրաստ ենք փոխանցել մեր փորձը: Հույս ունենք, որ հետեւողական աշխատանքի շնորհիվ կարող ենք հասնել ցանկալի արդյունքների»:

ԿԳՄՍ նախարարը տեխնիկական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում համագործակցությունն առաջարկել է դիտարկել, մասնավորապես՝ Սյունիքի մարզում գործող հաստատությունների օրինակով:

«Մեզ շատ կհետաքրքրի համատեղ ծրագրերի հնարավորությունը Սեյդիի տարածաշրջանում, որտեղ ունենք միջին մասնագիտական ուսումնական հաստատություն: Հետաքրքրված ենք ինչպես ենթակառուցվածքների զարգացման, պայմանների բարելավման, դասախոսական կազմի վերապատրաստման, կարողությունների զարգացման ուղղությամբ համագործակցության հնարավորությամբ, այնպես էլ կոմերսոն մասնագիտությունների գծով համատեղ կրթական ծրագրերի մշակմամբ», - ասել է Ժաննա Անդրեասյանը եւ ընդգծել, որ այժմ արդիականացման փուլում են երկու երկրների միջեւ կրթության, գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության ծրագրերը:

Կողմերը քննարկել են նաեւ ՀՀ հանրակրթական դպրոցներում պարսկերենի ուսուց-

ման հնարավորությունները՝ համատեղ ծրագրային նախաձեռնությունների իրականացմամբ: Ժաննա Անդրեասյանն այս համատեքստում կարելու է ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան հետ արդյունավետ համագործակցությունը. «Նախորդ տարվա սեպտեմբերից տարածաշրջանային լեզուների, այդ թվում՝ պարսկերենի ուսուցմանը հատկացնում ենք մեծ ուշադրություն: Կարծում եմ՝ սա հանրային դիվանագիտության ամրապնդման հարցում կարող է ունենալ կարելու նշանակություն»:

Կողմերը ընդգծել են, որ երկու պետությունների համար առանձնահատուկ կարեւորություն ունի միջբուհական համագործակցությունը: Կողմերը կարելու են նաեւ երկու պետությունների բարձրագույն կրթության որակավորումների եւ ավարտական փաստաթղթերի փոխանաչման հարցը:

ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրին իր խոսքում ընդգծել է հայ-իրանական պատմական բարեկամական հարաբերությունները՝ շեշտելով, որ երկու ժողովուրդների խաղաղ գոյակցության փաստը Իրանում հայկական եկեղեցիների, իսկ Երեւանում՝ Կապույտ մզկիթի առկայությունն է:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

«Աճ, կրթություն եւ նորարարություն»

Ակադեմիական քաղաք՝ որպես նոր ենթակառուցվածք եւ բովանդակություն

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը մասնակցել են Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ կազմակերպված «Աճ, կրթություն եւ նորարարություն» թեմայով քննարկմանը:

Նախարար Ժաննա Անդրեասյանը հարցուպատասխանի ձևաչափով ներկայացրել է կրթության որակի բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարության առաջիկա տարիների ռազմավարական ծրագրերը եւ նախատեսվող քայլերը՝ ընդգծելով կրթության բոլոր մակարդակների խնդիրների հասցեագրումն ու լուծումը՝ որպես մեկ շղթայի հաջորդական օղակներ: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը կարելու է «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» նոր օրենքի ընդունումը՝ նշելով, որ ՀՀ կառավարության կողմից նախանշված է հավակնոտ ծրագիր՝ ունենալ ակադեմիական քաղաք՝ որպես նոր ենթակառուցվածք եւ բովանդակություն:

«Անենակարելի հարցերից մեկը բարձրագույն կրթության եւ հետազոտության սերտացման սկզբունքն է. այնպես անել, որ բուհերը լինեն ոչ միայն ակադեմիական միջա-

կայր, այլեւ գիտական հետազոտությամբ զբաղվող կառույցներ», - նշել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ բարձրագույն կրթության ոլորտում ֆինանսավորման ձեւերին, որոնք պետք է բազմազանացվեն տարբեր խնդիրների լուծման համար ձեւավորելով տարբեր մոտեցումներ: Ըստ նախարարի՝ նախատեսվում է վերանայվել բուհերի տրվող ֆինանսավորումը՝ այն փոխկապակցելով գիտահետազոտական գործունեության հետ, ինչպես նաեւ վերափոխել կրթաթոշակային քաղաքականության տրամաբանությունը:

Ի լրումն նախարարի Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանն ասել է, որ հետազոտություն իրականացնելու տեսանկյունից Հայաստանում առաջատար են ֆիզիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ինֆորմատիկայի ոլորտները:

Քննարկմանը մասնակցել են նաեւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը, Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) տնօրեն Արմեն Օրոջյանը, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն Կառլին Գեգինատը, Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասի-

այի տարածաշրջանի գլխավոր տնտեսագետ Իվալին Իզվորսկին:

Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն Կառլին Գեգինատն իր հերթին նշել է, որ միջազգային կառույցները համատեղ համընդհանուր ունեն Հայաստանում բարձրացնելու կրթության որակը, զարկ տալու նորարարությանը, արտադրողականությանը, զարգացնելու ներառականության ընդլայնման հնարավորությունները:

Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի գլխավոր տնտեսագետ Իվալին Իզվորսկին ներկայացրել է այլ երկրների, մասնավորապես՝ Եստոնիայի, Ֆինլանդիայի, Կորեայի, Մեքսիկայի փորձը, որոնք հաղթահարել են ճգնաժամը եւ կրթական բարեփոխումների արդյունքում նաեւ տնտեսական աճ գրանցել:

«Աճ, կրթություն եւ նորարարություն» թեմայով քննարկման նպատակն էր մեկ հարթակում միավորել կրթության եւ նորարարության ոլորտների Հայաստանի հիմնական դերակատարներին՝ ներկայացնելու իրենց փորձը բարձրագույն կրթության եւ ստեղծարարության միջեւ կամուրջներ ստեղծելու վերաբերյալ:

Համակարգ

ՀՀ պետական բուհերի ռեկտորների հետ քննարկվել են ոլորտային մի շարք հարցեր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է ՀՀ պետական բուհերի ռեկտորների հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանը:

Նախարարը ողջունել է ներկայացրած եւ նշել, որ բարձրագույն կրթության ոլորտում առկա խնդիրներն ու նախատեսվող փոփոխությունները պահանջում են միասնական մոտեցում եւ համակարգային լուծում:

Այս տարի առաջին անգամ միասնական քննություններն անցկացվել են երկու փուլով, որը ընդունելության համակարգի բարելավմանը միտված քայլ է եւ հավելյալ հնարավորություն է դիմորդի համար: «Երկրորդ փուլից հետո կարվեն համապատասխան վերլուծություններ՝ հասկանալու, թե այս ձեւաչափը որքանով է արդյունավետ, եւ ինչ լրանջակետերի կարիք կա», - նշել է նախարարը՝ հավելելով, որ «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին օրենքի մշակման շրջանակում եւս այս հարցը կդիտարկվի»:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման ընթացակարգերում արված փոփոխություններին, համաձայն որոնց կրճատվել են բուհերին հատկացված տեղերը՝ ըստ լիցենզիայի պահանջների՝ առաջնահերթությունը տալով առավել քիթախային մասնագիտություններին: «Կրթության մասին» օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է լիազորող նորմ լիցենզիոն տեղեր տրամադրելիս, որպես պարտադիր պայման, լաբորատոր սարքավորումներով հագեցվածությունը՝ հաշվի առնելով մասնագիտության ուսուցման ստանդարտները, որոնք եւս անհրաժեշտ է սահմանել: Սա, նախարարի ընդգծմամբ, նոր որակ է ապահովելու բուհերի համար:

Հաջորդ խնդիրը վերաբերում էր կրթաթոշակային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ պետական բյուջեից մեծ գումար է հատկաց-



վում այս ուղղությամբ, սակայն պետք է հասկանալ, թե որքանով է դա արդյունավետ եւ ինչ նպաստ է բերում ուսանողներին: Նախարարի գնահատմամբ՝ այս ուղղությամբ պետք է փոփոխություն արվի մի քանի սկզբունքներով. «Կարծում ենք՝ պետք է մեծացնել կրթաթոշակի չափը, հստակեցնել ստացողների շրջանակը եւ սահմանել այն ուղղությունները, որոնք ունեն դիմորդների թվի մեծացման խնդիր պետության առաջնահերթության տեսանկյունից»: Որպես կրթաթոշակային քաղաքականության կարելու սկզբունք նախարարը կարելու է նաեւ սոցիալական գործոնի հաշվի առնելը՝ հստակ խմբերի ներգրավումը:

Հանդիպմանը խոսվել է նաեւ օտարերկրյա ուսանողների՝ ՀՀ բուհեր ընդունելությունը խրախուսելու, ընթացակարգային խնդիրները համատեղ լուծելու հարցերի մասին: Ըստ նախարարի՝ տեղափոխման եւ ընդունելության կարգերը քննարկման փուլում են. նպատակն ուղղորդում թափանցիկությունն ու արդյունավետ վարչարարությունն ապահովելն է, ինչպես նաեւ օտարերկրյա ուսանողների թվի մեծացումը՝ ավելի լուրջ ու համակարգային գործունեություն ծավալելու նպատակով:

Անդրադարձ է եղել բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏԾՍ) ուղղություններով ակադեմիական տարկետման հնարավորություններին: «Կառավարության ԲՏԾՍ ուղղություններով սովորող քաղա-

քացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տրամադրելու կարգի վերաբերյալ որոշման նախագիծն արդեն իսկ շրջանառվում է: Հաստատումից հետո ունենալու ենք 2-րդ փուլով որոշում, որով կհաստատվեն մասնագիտությունների ցանկերն ու կրթական ծրագրերը, որոնցով տարկետման տրամադրումը հնարավոր է լինելու», - ասել է նախարարը՝ հավելելով, որ Կառավարության որոշմամբ կկարգավորվեն տարկետման ընթացակարգը, ինչպես նաեւ մասնագիտությունների եւ բուհերի ցանկը:

Քննարկվել է նաեւ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե ստեղծելու հարցը: Նախարարի գնահատմամբ՝ նպատակը բարձրագույն կրթության եւ գիտության բնագավառների մեկ միասնական քաղաքականության իրականացումն է, այդ ոլորտները կարգավորող իրավական դաշտի կատարելագործումն ու բնագավառների պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը:

Հանդիպման ավարտին նախարարը կոչ է արել ռեկտորներին լինել մասնակցային եւ հանդես գալ առաջարկներով «ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի նախագծի շուրջ: Ռեկտորները հակիրճ ներկայացրել են իրենց հուզող հարցերը եւ նախանշել առաջարկները հաջորդիվ ներկայացնելու պատրաստակամությունը:

Բարձրագույն կրթություն

Լրացումներ՝ բուհերի ընդունելության կարգում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգում լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է բարձրագույն կրթության ոլորտում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ներառականության միտումներից եւ հիմնականում վերաբերում է ընդունելության միասնական պահանջների սահմանմանը եւ հստակեցմանը: Համայնքային ներկայացուցիչների եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հիմունքների հիմքով, յուրաքանչյուր տարի ՀՀ բուհերի առկա ուսուցման ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ, համապատասխան մասնագիտությունների մրցութային քննություններից դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդներին պահուստային տեղերից հատկացվում են անվճար ուսուցման տե-

ղեր: Ուստի, անհրաժեշտ է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների անվճար տեղերի հատկացման հարցը կարգավորել ենթաօրենսդրական իրավական ակտերով: Ըստ այդմ համաձայն նախագծի՝ կվերաբաշխվեն վճարովի համակարգի համար առևճակված անցումային միավորներ հավաքած ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդների՝ անվճար մրցույթի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության հատկացրած տեղերի: Փոփոխությունը հնարավորություն կտա մինչեւ 7 անվճար տեղ հատկացնել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության համար:

Բացի դրանից՝ ընդունելության մրցույթից հետո որոշ մասնագիտություններ (կրթական ծրագրեր) չեն համալրվում կամ համալրվում են մասնակի (1-3 դիմորդ), որի արդյունքում հնարավոր չի լինում բուհերում ձեւավորել համապատասխան ակադեմիական խմբեր (հիմնականում «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագրերով):

Ելնելով վերոգրյալից՝ բուհերի առաջարկությունների, ինչպես նաեւ նախորդ տարիների ընդունելության քննությունների վերլուծության հիման վրա անհրաժեշտություն է առաջացել «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագրերով ընդունելություն իրականացրած բուհերի անվճար ուսուցման համակարգի մասնակի համալրված տեղերի վերաբաշխման տվյալ մասնագիտության կրթական ծրագրի ուղղվածությանը համապատասխան մեկ այլ մասնագիտության (կրթական ծրագրով):

Այսպիսով՝ որոշ կրթական ծրագրերով ընդունելություն իրականացրած բուհերի անվճար ուսուցման համակարգի մասնակի համալրված տեղերը տվյալ մասնագիտության կրթական ծրագրի ուղղվածությանը համապատասխան մեկ այլ մասնագիտության (կրթական ծրագրով) համալրելը, ինչպես նաեւ հաշվի առնելով օրենսդրությամբ ընձեռնված հնարավորությունը եւ դիմորդի կարծիքը, հանձնաժողովը հնարավորություն կունենա իրականացնելու համապատասխան բաշխումը:

Հեղինակ՝ ԳՆՎԱՆՆԻՍՅԱՆ

Շնորհավորում եւս

«Կրթություն» շաբաթաթերթում հրատարակված բազմաթիվ հոդվածների, մի շարք համաժողովների գրքերի, ձեռնարկների, բառարանների հեղինակ, լեզվաբան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լավրենտի Աշոտի Միրզոյանը մայրենի լեզվի պահպանման եւ զարգացման գործում ներդրած ավանդի համար ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է Մուկես Խորենացու մեդալով:

Սշակույթ

Հոբելյանական Գալա համերգ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Արամ Խաչատրյան համերգատանում տեղի կունենա գալա համերգ՝ նվիրված Հայաստանի պետական կամերային նվագախմբի 60-ամյակին:

Համերգին կմասնակցեն Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան), Հայաստանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Ռոբերտ Սլեյթյան), «Պոլկո» պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան), Երեւանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ խմբավար՝ Քրիստինա Ոսկանյան):

Որպես մենակատարներ հանդես կգան Վահան Մարտիրոսյանը (դաշնամուր), Սլեյթյան Լավրենտի Միրզոյանը (դաշնամուր), Նիկոլայ Մադոյանը (ջութակ), Նարեկ Հախնազարյանը (թավջութակ): Դիրիժորներ՝ Վահան Մարտիրոսյան, Ջավեն Կարդանյան, Հմայակ Դուրգարյան, Ռոբերտ Սլեյթյան:

Ծրագրում կինչեն Լյուդվիգ Վան Բեթհովենի, Կոմիտաս-Ջարեհ Սահակյանցի, Էդվարդ Միրզոյանի, Էդուարդ Բաղդասարյանի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, Անտոնիո Վիվալդիի ստեղծագործությունները:

Նշենք, որ Հայաստանի պետական կամերային նվագախումբը իր մեծ վերջին նվագախումբը ծուխակահար Ջարեհ Սահակյանցի նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ: Շնորհիվ իր վառ անհատականության եւ հեղինակության՝ Ջարեհ Սահակյանցը կարողացել է իր շուրջ համախմբել մի խումբ նվիրյալ երաժիշտների: Կարճ ժամանակում նվագախումբը ձեռք է բերել մեծ համբավ Հայաստանում եւ երկրի սահմաններից դուրս: Ջարեհ Սահակյանցը թողել է կատարողական, ստեղծագործական հարուստ ավանդույթներ, որոնք ժամանակ եւ շենացրել են նվագախմբի հետագա զեղարվեստական ղեկավարները՝ Կոստանդին Բաղդասարյանը (1975 թվականից), Ռուբեն Ահարոնյանը (1982 թվականից):

1997 թ. նվագախումբը միավորվել է Ջավեն Կարդանյանի ղեկավարած Երեւանի կամերային նվագախմբի հետ (գործել է 1979 թվականից): Արդյունքում կազմավորվել է ներկայիս ՀԳԿՄՍ-ը, որի ղեկավարությունը ստանձնել է անվանի դիրիժոր Արամ Ղարաբեկյանը: 2011 թվականից մինչ օրս նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժորն է Վահան Մարտիրոսյանը:

Նվագախումբը մեծ ներդրում ունի Հայաստանում կամերային երաժշտական մշակույթի տարածման եւ արմատավորման գործում:



Շիրակացու ճեմարան

Տեսլական

«Միջազգային բակալավրիատի դիպլոմա»

ՀՀ կառավարության որոշմամբ թույլտվություն է տրվել «Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը 2023-2024 ուսումնական տարվանից միջնակարգ կրթության երրորդ աստիճանի 11-12-րդ դասարաններում իրականացնել «Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագիրը անգլերենով՝ 3 տարի ժամկետով:

Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանը «Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագիրը (ՄԲԴԾ) իրականացնում է 2014 թվականից՝ ՀՀ կառավարության որոշման եւ Միջազգային բակալավրիատի կողմից ստացված հավաստագրի հիման վրա: Ծրագրի 2016-2023 թթ. 123 շրջանավարտներից 24-ը (կամ 20 %-ը) այլ երկրների քաղաքացիներ են, ընդ որում՝ նրանցից 21-ը՝ ազգությամբ հայ, ինչը հնարավորություն է տալիս մայրենի լեզվի ոչ բավարար իմացությամբ հայ երիտասարդներին ավագ դպրոցն ավարտել հայրենիքում ստանալով միջազգային չափանիշներին համապատասխան կրթություն:

Որոշման ընդունումը կապահովի ուսումնական հաստատության կրթական գործընթացի շարունակականությունը: Բացի այդ՝ ավագ դպրոցում երեխաների կրթությունն ապահովելու հնարավորությունը կնպաստի սփյուռքում գտնվող հայ ընտանիքների հայրենիք տեղափոխվելու որոշմանը:

Քանի որ ծրագրի իրականացման ընթացքում շարունակաբար կատարվում են ուսուցիչների վերապատրաստումներ արտերկրի մասնագետների կողմից, արդյունքում ձեւավորվում է միջազգային չափանիշներին համապատասխան որակավորում ունեցող ուսուցչական համայնք:

«Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագիրը չի իրականացվում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

«Հստակ գիտենք, թե ինչ ակնկալիքներ ունենք»

«ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի» նախագծի հանրային քննարկումների շարքը զարգացման գործընկերների մասնակցությամբ այսօր շարունակվել է հերթական խորհրդատվական հանդիպմամբ:

Քննարկմանը մասնակցել ու ողջունի խոսքով հանդես է եկել ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**: Նախարարը կարեւորել է այսօրինակ ձեւաչափերով քննարկումների անցկացումը, ինչպես նաեւ նշել, որ հանդիպման մասնակիցների դիտարկումները եւ առաջարկները փաստաթուղթն էլ ավելի կբարելավեն եւ ամբողջական կդարձնեն:

«Տարիների ընդմիջումից հետո այսօր ուրախությամբ կարող ենք փաստել, որ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը օրենքի կարգավիճակ ունի, եւ գործող օրենքի հիման վրա ներկայում քննարկում ենք գործողությունների ծրագիրը: Համատեղ ջանքերով պետք է նախանշենք գործողությունների ծրագրի այն առանցքային ու իրատեսական ճանապարհային քարտեզը, որով հնարավոր է հասնել ռազմավարությունում սահմանված հավակնոտ քիթախներին: Տեսական ժամանակ նախագծի շուրջ բազում աշխատանքներ են իրականացվել, հիմա հստակ գիտենք՝ ինչ ակնկալիքներ ունենք առաջիկա տարիներին: Գործողությունների ծրագիրը հնարավոր է առավել արդյունավետ իրականացնել՝ համագործակցելով պետական տարբեր գերատեսչությունների, զարգացման գործընկերների եւ հասարակական կազմակերպությունների հետ: Մենք շատ ուրախ ենք համատեղ անցնելու մեր նախանշած ճանապարհով», - ասել է Ժաննա Անդրեասյանը:



Հանդիպումը համանախագահել են ԿԳՄՍ փոխնախարար **Արթուր Մարտիրոսյան** ու Հայաստանում եւս պատվիրակության գործերի ժամանակավոր համակատար **Յան Պլեսինգերին**: Նախադարձական կրթության, հանրակրթության, նախնական եւ միջին մասնագիտական կրթության, ինչպես նաեւ արտադպրոցական ծառայությունների եւ ոչ ֆորմալ կրթության ոլորտներում նախատեսվող գործողությունների ծրագիրը մանրամասնորեն ներկայացրել են ԿԳՄՍ հան-

րակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը** ու նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետի պաշտոնակատար **Արմենուհի Պողոսյանը**: Հանդիպման ընթացքում ԿԳՄՍՍ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ **Լուսինե Գրիգորյանը** հանգամանորեն խոսել է բարձրագույն կրթության ոլորտում նախատեսվող գործողությունների ծրագրի ու տեսլականի մասին: Հիշեցնենք, որ հանդիպումը նախաձեռնել էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ Ասիական զարգացման բանկի եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

Գործատուները ոլորտի հիմնական գործընկերներն են

ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** մասնակցել է «Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում» (ՄԱԿԵՏԱ) ծրագրի ղեկավար կոմիտեի նիստին:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ **Արման Խոջոյանը** եւ ԿԳՄՍՍ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող **Արմենուհի Պողոսյանը**, Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության հայաստանյան գրասենյակի ազգային ծրագրերի ավագ համակարգող **Արթուր Փոքրիկյանը** եւ Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության գրասենյակի տարածաշրջանային տնօրենի տեղակալ **Վերներ Թուրքը**:

Կարեւորելով համագործակցությունը մասնավոր ոլորտի ընկերությունների հետ նախարարի տեղակալը նշել է, որ այժմ քննարկման փուլում է գտնվում «ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքից բխող գործողությունների ծրագիրը: Նախագծում, ըստ Արաքսիա Սվաջյանի, առանձնահատուկ շեշտադրվել են նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանն ուղղված քայլերը:

Այս համատեքստում Արաքսիա Սվաջյանը մատնանշել է ՄԿՈՒ հաստատությունների եւ մասնավոր հատվածի հետ համագործակցության, աշխատանքի վրա հիմնված ուսուցման, ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի ապահովման գործընթացները:

«ՀՀ կառավարության ծրագրում հստակ անրագրված է միջին մասնագիտական եւ



արհեստագործական կրթության ոլորտում դուալ ուսուցման, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ծավալների ընդլայնման եւ շարունակական զարգացման խնդիրը: Գյուղատնտեսական ոլորտի զարգացումը մեր երկրի առաջնահերթություններից է: Այսօր արդեն կարող ենք վստահ խոսել կուտակված դրական փորձի եւ գոհացնող արդյունքների մասին եւ փաստել՝ պետական ու մասնավոր կառույցների միջեւ համագործակցությունը կարելու է զարգացնել, որտեղ ունենք անընդհատ փոփոխվող մարտահրավերներ: Դրանք պետք է հաղթահարենք մասնավոր հատվածի հետ աշխատելու նոր ձեւաչափեր գտնելու ճանապարհով: Մասնավոր հատվածը, այսինքն՝ գործատուները, ՄԿՈՒ ոլորտի հիմնական գործընկերներն են առանց որոնց այս ոլորտը չի կարող զարգանալ: Պետք է փորձենք գտնել մեխանիզմներ՝ համատեղ առաջ գնալու ու զարգանալու համար», - ասել է ԿԳՄՍ փոխնախարարը:

Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության գրասենյակի տարածաշրջանային տնօրենի տեղակալ **Վերներ Թուրքի** խոսքով կրթական համակարգը երկրի բարեկեցության համար առանցքային նշանակություն ունի: Նա նշել է, որ վերջին շրջանում ամեն ինչ արվում է Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության զարգացման եւ արդիականացմանն ուղղությամբ: «Ձարգացնելով դուալ կրթության համակարգը՝ մենք կնպաստենք երկրի տնտեսության աստիճանական զարգացմանը»:

Վերներ Թուրքը տեղեկացրել է, որ «ՄԱ-



Հոբելյան եւ շնորհանդես

«Ես՝ որդին ըմբոստ հինավուրց հողիդ, Ասունը՝ Արցախ...»

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հայագիտական կենտրոնում Դավիթ Միքայելյանի «Հայացք ծնունդից» գրքի շնորհանդեսն էր: Գրքի հեղինակը լինելով հանդերձ՝ այն նաեւ գրողի 70-ամյա հոբելյանն է խորհրդանշում: Դավիթ Միքայելյանը բանաստեղծ է, արձակագիր, վաստակավոր լրագրող, երգահան, եւ ամենը նա ամփոփել է կետարայա աշխատանքային կենսագրության մեջ:

Այս գրողների միության եւ «Գրիգոր Նարեկացի» համալսարանի նախաձեռնությամբ էր կայացել միջոցառումը: Առաջին հայացքից կարող է անպատեհ երեւալ շրջափակված Արցախում գրական հավաքի կազմակերպումը: Սակայն մարդաշատ դափնիքը վկայում էր, որ հուսահատ ժամին կենարար է մարդու շնչառությանը խառնվող արվեստի՝ սիրտ գոտեպնդող ներկայությանն ամենափոքր արարն անգամ: Ինչպես բանաստեղծն է ասում.

- Ես շոշափում եմ  
Քարը,  
Ծառը,  
Պատը,  
Անձրեւի կաթիլները  
Ու ինձ տեսնում եմ  
Նրանց մեջ...

Դավիթ Միքայելյանի տողը բարությանը լեցուն հայացք ունի շրջապատի հանդեպ, ինչն էլ ամուր է պահում հայրենասիրական հույսը: Եվ ծնունդից դափնիքում հավաքվածները՝ Այս գրողների միության անդամներ, հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչներ, լրագրողներ, ուսանողներ, ամենից առաջ իր ընթերցողներն էին, ովքեր եկել էին եւ մեծարելու հոբելյանի գրական, մշակութային վաստակը, եւ միմյանց ջերմություն ու հույս փոխանցելու՝ նրա հայրենասիրական տողերով:

Արվեստագետը շնորհակալ է Աստուծոյն իրեն բաժին հասած շնորհքի համար, եւ ի տրիտուր ոչ միայն այն չի մխիթել, այլեւ տասնամյակների ընթացքում անձամբ ձգտել է նոր ելելներ հավելել իր տողին: Գրատարակել է բանաստեղծական եւ արձակ գործերի 20 ժողովածուներ, ինչպես նաեւ «Ցավից եւ սիրուց ծնված երգեր» երգարանը:

Արժանացել է ԼՂՀ Եղիշեի անվան պետական մրցանակի, «Վաչագան Բարեպաշտ» եւ «Երախտագիտություն» մեդալների:

1998-ից «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի սեփական թղթակիցն է Արցախում:

Դ.Միքայելյանը լրագրությունից է եկել դեպի գրականություն, թե՛ հակառակը, դժվար է նրա կենսագրության մեջ նման շեշտադրություն անել, քանզի երկուսն էլ միշտ միահյուս եւ նրա կյանքում:

Եվ հանդիպմանը, ողջունելով ներկայումս, Այս գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը Դավիթ Միքայելյանին ներկայացրեց տասնամյակներ տեսած իրենց համատեղ աշխատանքի ժամանակներից: Հեռավոր 1973-ին շնորհալի երիտասարդին մարզային «խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրություն են ընդունել հենց իր երաշխավորությամբ: Համագործակցությունը շարունակվել է նաեւ Այս գրողների միությունում: Դ.Միքայելյանը երկար տարիներ միության քարտուղարն էր, խմբագրել է նաեւ միության երկու պարբերականները՝ «Պղնձ Պուղի» երգիծական հանդեսը եւ «Եղիցի լույս» թերթը:

«Իր նմանների համար է ասված միջնադարից հանող «շնորհալի» դրվատանքը: Եվ շնորհալիությունն է հենց իր ողջ ստեղծագործության աստղծը: Ոչ ոք չի կարող կուրծք ծեծել, թե ինքն իր կարողացածից ավելին է անում: Ինչ վերաբերում է Դավիթին, նա երբեք չի ծեսնում, գրում է՝ երբ պիտի գրի, կատակում է՝ երբ պիտի կատակի, երգում է, երբ պիտի երգի, երաժշտություն է հորինում, երբ պիտի հորինի... Իսկ այդ «երբ»-ի սահմանադիրն ինքն Աստվածն է ամենակարող: Գրողի մեծագույն առաքելությունը, կարծում եմ, իր իսկ կերպարում մարդուն վեհացնելն է»,- նշել է Վ.Հակոբյանը:

Այս գրողների միության նախագահը հոբելյանին շնորհավորելով նոր լույս տեսած գրքի առթիվ, որն արժանացել է ՀՄ մրցանակին, նրան հանձնեց «Նարեկացի» մեդալ եւ հուշանվերներ: Միաժամանակ Վ.Հակոբյանը Դ.Միքայելյանին հանձնեց Հայաստանի գրողների միության Ոսկե մեդալը՝ «Գրական վաստակի համար»: Մայր Հայաստանը ներկա է պոետի բոլոր արարումներում.

- Գարուն է եկել, Հայաստան աշխարհի,  
Կռուկներդի հետ  
Ինձ էլ առ գիրդ, մի քիչ տաքանամ...  
Ախր, ծնունդ այնքան երկարեց...

Այս գրողների միության նախագետ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի խոսքով է բացվում «Հայացք ծնունդից» ժողովածուն: «Գրողի ծննդավայրի լայնահուն հայացքում է Արցախը եւ նրա ստեղծագործությունները հյուսված են հարազատ լեռնաշխարհի մարդկանց



կենսափիլիսոփայությունից ու հոգեբանությունից: Այդ մարդիկ արմատներով կապված են հայրենի եզերքին, ձգտումներով, բարոյական դիմագծով իրենց նախնիների լավագույն ավանդույթների խտացումն ու շարունակողներն են՝ նրբասիրտ ու խիզախ, հպարտ ու զեղեցիկ, արմատներով առողջ, երազներով՝ ծիածանագույն»,- Ելույթում իր գնահատանքը վերահաստատեց գրականագետ Ս.Խանյանը:

- Փողոցն այս գիրք է՝  
Սուրբ ու մեարդայան,  
Կարող ես նրա մի տողը դարձիր:  
Պապիդ քայլից է փողոցը ծնվել,  
Որդուդ քայլերով դու անմահացրու...

44-օրյա պատերազմն իր դաժան հետագծով չի կտրել նրան անկարող լինելով բեկանել գրողի հավատը եւ նոր ժողովածուն դրա վառ արտահայտությունն է: Այդ արհավիրքից հետո, եթե գրվում է տողը, եւ գույնը, մեղեդին երևում են նրա ստեղծագործությունում, ապա կրկին հաղթում է կյանքը՝ իր ելույթում նշել է բանասիրական գիտությունների դոկտոր Զինաիդա Բալասանը:

Բանաստեղծը «Հայացք ծնունդից» ժողովածուի մեջ ամփոփել է Արցախյան երեք պատերազմների ժամանակ իրեն պարուրած զգացումներն ու ապրումները, փորձել ընկալել դաժան փորձությունների միջով անցած մարդկանց ճակատագրերը, չպարտվող նրանց ըմբոստ ոգին, անգամ ողբերգական իրավիճակներում չհուսահատվելու, լույսի շող որոնելու, հայրենի

հողը պաշտպանելու եւ այն շենացնելու եւ գործնելու կամքի ուժը:

- Ես՝ որդին ըմբոստ հինավուրց հողիդ, Ասունը՝ Արցախ:

Գրողի ստեղծագործության ամուր հենքը իր ծննդավայրն է՝ Ասկերանի շրջանի Այգեստան գյուղը, որից էլ արտածվում են նրա բազմաթիվ գործերը: Յուրաքանչյուրիս բնօրրանում եւ բանաստեղծություն կա, եւ մեղեդի, եւ ժողովրդական բառ ու բանի հնայքն իրենց մեջ առած զվարճախոսներ: Սակայն բոլորին չէ տրված այդ ամենն ընկալելու եւ անմահացնելու մեծագույն շնորհքը: Դավիթ Միքայելյանը, լավագույն զավակի պես, բանաստեղծական, արձակ գործերի ժողովածուներով, ի դեմս իր ծննդավայրի, Արցախն առավել ճանաչելի է դարձրել նրա սահմաններից դուրս:

Տասնյակ երգերի ոչ միայն բառերի, այլեւ երաժշտության հեղինակ է եւ ժողովրդական երգերի կատարման իր հմտությամբ հաճախ է հանրությանը ներկայացել նաեւ իր այս գործերով: Համագործակցել է անվանի կոմպոզիտորներ հաջատուր Ներսիսյանի, Էդուարդ Ղազարյանցի, Արմեն Նասիբյանի հետ:

«Ցավից եւ սիրուց ծնված երգեր»-ի առյուծի բաժինը նվիրված է Արցախյան գոյապայքարի նահատակների հիշատակին: Դրանցից շատերը վաղուց տեղ ունեն անվանի երգիչների հայտագրում:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ իրավաբանական գիտությունների թեկնածու Վաղինի Գուլսեփյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Տաթևիկ Սողոմոնյանը: Ասկերանի շրջվարչակազմի ղեկավարի շնորհավորանքներ են հուշանվերը հոբելյանին փոխանցեց շրջանային «Բերդ» թերթի խմբագիր Անահիտ Պետրոսյանը:

Գրողի բանաստեղծությունների ընթերցմամբ հանդես են եկել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ուսանողները, ինչն էլ են նրա տողերով գրված երգերից:

Պաշարված Արցախում նման միջոցառման կազմակերպումը՝ ինքնափորձային անկորնչելի պայքարի, մեր կամքի ուժի եւս մեկ վկայությունն է, ցերեկույթի ավարտին իր շնորհակալական խոսքում նշել է Դավիթ Միքայելյանը խաղաղություն մաղթելով Հայոց աշխարհին մեր ժողովրդին:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
Ք. Ստեփանակերտ,  
մեր սեփական թղթակից

Բարեփոխումներ

Լաբորատորիաները կդառնան արդիական ուսումնական միջավայրեր

ԲՏՃՄ ոլորտի կրթական միջավայրի բարելավման նպատակով Տավուշի մարզի 80 դպրոցների տրամադրվել են անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներ, պարագաներ, նյութեր եւ լաբորատոր գույք, ինչպես նաեւ համակարգչային սարքավորումներ՝ «Ֆիզիկա», «Զիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» եւ ՏՀՏ առարկաներից: Նշված լաբորատորիաների ստեղծումը հնարավորություն է տվել ԲՏՃՄ առարկաների արդյունավետ եւ համալիր դասավանդման տեսանկյունից տեսական գիտելիքները զուգակցել գործնական հմտություններով: Նշված պարագաները կիրառվելու են նաեւ նոր մշակված առարկայական չափորոշիչների փորձարկման եւ ներդրման նպատակով՝ ամենօրյա դասապրոցեսում:

Լաբորատորիաները ստեղծվել են «Հայաստանում ԵՄ-ն հանուն նորարարության. բնագիտության, տեխնոլոգիայի, ծարտարագիտության, մաթեմատիկայի (ԲՏՃՄ) ոլորտներում կրթության բարելավում»

դրամաշնորհային փորձնական ծրագրի շրջանակում, որը միտված է «Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոնի» կարողությունների հզորացմանը, ինչպես նաեւ Տավուշի մարզում ԲՏՃՄ առարկաների կրթական միջավայրի բարելավմանը նպաստելով այս ուղղությամբ կրթության որակի եւ բովանդակության արդիականացմանն ու կատարելագործմանը:

ՀՀ Արմավիրի մարզի հիմնական եւ միջնակարգ մի շարք դպրոցների եւս կտրամադրվեն առարկայական վերանայված ծրագրերին եւ չափորոշիչներին համապատասխանող ժամանակակից բնագիտական եւ ինժեներական լաբորատոր եւ համալիր կարգչային սարքավորումներ ու գույք: Ստեղծվող լաբորատորիաները համայնքների դպրոցներում կդառնան արդիական ուսումնական միջավայրեր, որտեղ աշակերտը կարող է տեսական գիտելիքներն ամրապնդել գործնական հմտություններով, գիտափորձեր կատարել համապատաս-

խան նյութերով եւ սարքավորումներով:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը մարզի 114 միջնակարգ եւ հիմնական դպրոցներում իրականացրել է կարիքների գնահատում: Գրասենյակի աշխատակիցները մարզպետարանի ներկայացուցիչների հետ քննարկել են նախատեսվող աշխատանքները, ծրագրի իրականացման ընթացքը, հստակեցրել ուսումնական հաստատությունների ցանկերը: Կարիքների գնահատման արդյունքում ծրագրի առաջին փուլում՝ 2023 թվականի ընթացքում, կներգրավվեն մարզի 100 հանրակրթական դպրոցներ՝ 17 հիմնական եւ 83 միջնակարգ:

ՀՀ հանրակրթական դպրոցների համար բնագիտական եւ ինժեներական լաբորատոր սարքավորումների եւ նյութերի ձեռքբերման համար մասնագիտական աջակցություն տրամադրելու նպատակով ընտրվել են անհատ խորհրդատուներ, որոնք, համաձայն առարկայական չափորոշիչների, վերանայել եւ կազմել են ֆիզիկայի,

կենսաբանության, աշխարհագրության լաբորատորիաների հիմնման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների, նյութերի ցանկերը եւ տեխնիկական հատկորոշիչները: Դրանք տրամադրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը եւ ԿՀՆԱԿ-ին՝ առաջարկություններ եւ դիտողություններ ներկայացնելու համար, որոնց հիման վրա վերանայվել են վերոնշյալ ցանկերը եւ տեխնիկական հատկորոշիչները եւ հաստատվել Համաշխարհային բանկի կողմից: Այժմ ՀԲ-ի կողմից դիտարկման փուլում են ձեռք բերվող կառույցի, լաբորատոր սարքավորումների եւ նյութերի, համակարգչային տեխնիկայի ցանկերը: Այս գործընթացին հաջորդելու է մրցույթների իրականացման փուլը:

Հավելե՛ք, որ վերոնշյալ դպրոցները կվերազինվեն «Հանրակրթական դպրոցների վերազինումն ենթաբաղադրիչի շրջանակում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության առաջարկով:

Օգնություն ուսուցչին

Խաչվող հասկացություններ

Խաչվող հասկացություններն առանց-քային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար եւ օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Դրանք պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների ուսուցման ժամանակ:

Ընդհանրական հասկացությունների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է առարկայի առանձնահատկությամբ, սակայն վերոնշյալ խաչվող հասկացություններից ոչ բոլորն են պարտադիր ուսուցման տվյալ առարկայի շրջանակում: Դրանք հարկ է կիրառել՝ ըստ թեմայի նպատակահարմարության՝ հաշվի առնելով հաղորդվող թեմայի յուրահատկությունը: Սակայն, որպես ընդհանուր պահանջ, հարկ

է, որ բոլոր առարկաներում խաչվող հասկացություններն ընտրվեն ու կիրառվեն իրական կյանքի հետ համադրման համատեքստում:

Առարկայական ծրագրերում ներառված են տասներկու առանցքային գաղափարներ՝

- **Օրինաչափություն**
- **Պատճառ եւ հետեւանք**
- **Մասշտաբ, համամասնություն, քանակ**
- **Կառուցվածք եւ գործառույթ**
- **Համակարգ եւ մոդել**
- **Էներգիա, նյութ**
- **Կայունություն եւ փոփոխություն**
- **Չարգացում**
- **Անհատ եւ հարաբերություններ**
- **Ժամանակ եւ տարածություն**
- **«Անհատական եւ մշակութային արժեհամակարգ**
- **Համաշխարհայնացում**

Հասկացություն	Նկարագրություն	Օգնող հարցեր
<b>Օրինաչափություն</b>	- երեւոյթների միջեւ օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետեւանքային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվածություններ - որոշակի սկզբունքով կրկնվող երեւոյթներ հասարակության մեջ - մարդու գիտակցութեան ղուրս եւ նրանից անկախ բնութեան ու հասարակության մեջ տեղի ունեցող օբյեկտիվ գործընթացների արտացոլում ճանաչողության մեջ եւ գիտելիքների որեւէ բնագավառում - որեւէ երեւոյթի պատմական զարգացման մեջ դրսեւորվող (դրսեւորված) օրենք եւ դրա հետեւանքը՝ արդյունքը	Ի՞նչ է քննարկում: Ի՞նչն է օրինաչափ:
<b>Պատճառ եւ հետեւանք</b>	- յուրաքանչյուր երեւոյթի անհրաժեշտաբար մեկ այլ երեւոյթի նախորդումը - պատճառահետեւանքային փոխազդեցություններ - պատճառահետեւանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու եւ բացատրելու համար	«Ինչպե՞ս եղավ», «Ինչո՞ւ եղավ», «Ի՞նչը ստիպեց, որ լինի», «Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ»:
<b>Մասշտաբ, համամասնություն, քանակ</b>	- մասշտաբը որեւէ բանի հարաբերական մեծություն է, չափանիշ, չափի աստիճան - համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին կօզնի հասկանալ իր կատարած աշխատանքի ծավալը՝ հարկ եղած դեպքերում՝ համեմատություններ, վերլուծություններ կատարել	Ի՞նչ է, ի՞նչ չափով է, ինչպե՞ս է փոփոխվել ժամանակի ընթացքում:
<b>Կառուցվածք եւ գործառույթ</b>	- «Կառուցվածք» հասկացությունը տարրերի միջեւ եղած համակարգաստեղծ, օրինաչափ կապերի ու հարաբերությունների ամբողջություն է: - Կառուցվածքայնությունը բնութագրվում է նաեւ կազմակերպվածությամբ եւ ինքնակազմակերպվածությամբ: - Կառուցվածքը միեւնույն խմբին կամ դասին պատկանող օբյեկտների բազմություն է՝ դրանց հատուկ գոյության ու գործառնության համընդհանուր սկզբունքներով: - Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաեւ դրանից բխող գործառույթները, կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ:	Ի՞նչ է, ինչի՞ համար է, ինչպե՞ս են փոխկապակցված:
<b>Համակարգ եւ մոդել</b>	- Համակարգը միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն է, որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն: - Համակարգի միջոցով սովորողն ունենում է ընդհանրական պատկերացում՝ նմանություններ ունեցող երեւոյթների մասին: - Մոդելները համակարգի պարզեցված տարրերակներն են: Համակարգը՝ որպես օբյեկտ, հանդես է գալիս միայն իր տարրերով եւ դրանց անկրկնելի ու եզակի փոխազդեցությամբ: - Յուրաքանչյուր համակարգ օժտված է կառուցվածքայնությամբ եւ բաղկացած է կոնկրետ քանակությամբ տարրերից: - Համակարգին հատուկ է որոշակի կայունություն եւ հարաբերական ինքնուրույնություն, որով հանդես է գալիս ավելի մեծ համակարգի շրջանակում ենթահամակարգի կարգավիճակով:	Ինչպիսի՞ն է համակարգը միասնական, թե՞ տրոհվող: Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: Ինչպե՞ս են փոխկապակցված համակարգն ու մոդելը:

Հասկացություն	Նկարագրություն	Օգնող հարցեր
<b>Էներգիա, նյութ</b>	- Այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շրջապատում, նյութ է՝ կենդանի կամ անկենդան: - Կենդանի նյութերը մշտապես ինքնամորոգվում են, իսկ անկենդանները միայն փոփոխվում են արտաքին ուժի ազդեցությամբ: - Մեր շուրջըլուրը նյութ է կամ էներգիա: - Էներգիան նյութի հիմնական հատկություններից մեկն է, նրա շարժման չափը, շարժման հզորությունը՝ ուժը (ջերմության, լույսի, էլեկտրականության, մեխանիկական շարժման ձեւով):	Ի՞նչ է նյութը, քանի՞ տեսակ է լինում: Ի՞նչ է էներգիան եւ ի՞նչ կապի մեջ է նյութի հետ:
<b>Կայունություն եւ փոփոխություն</b>	- Կայունությունն ու փոփոխությունը բոլոր համակարգերի բնութագրիչներն են: Համակարգերը կայուն են, երբ բոլոր մուտքերն ու ելքերը հավասարակշռված են, որպեսզի ներքին գործընթացները կարողանան շարունակվել կայուն վիճակում: - Փոփոխություն տեղի է ունենում, երբ մուտքերն ու ելքերը հավասարակշռված չեն, այդ դեպքում առաջանում է կայունության փոփոխություն: - Փոփոխությունը կարող է գրանցել առաջընթաց կամ հետընթաց:	Ի՞նչ է կայունությունը: Վրոյո՞ք ամեն փոփոխություն զարգացում է:
<b>Չարգացում</b>	- Չարգացումը շարժման բարձրագույն տեսակ է, բնորոշվում է պարզից բարդ օրինաչափ անցումով: - Չարգացումը այնպիսի փոփոխություն է, որի հետեւանքով առաջանում է որակական նոր առաջադիմական վիճակ:	Ի՞նչ է զարգացումը: Վրոյո՞ք ամեն փոփոխություն զարգացում է:
<b>Անհատ եւ հարաբերություններ</b>	- Անհատի կյանքը, համոզումները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգեւոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում: - Անհատն այն մարդն է, որը բնութագրվում է տարբերիչ, միայն իրեն հատուկ հատկանիշների համալիրով, ունի մեջ զարգացած է անհատականությունը, ինքնուրույն, կատարելության հասած մարդն է, որը ակտիվորեն ճանաչում եւ վերափոխում է իրականությունը, իր ուրույն ներդրումն ունի հասարակության զարգացման առաջընթացում, հաջողությամբ դրսեւորվում է գործունեության տարբեր ոլորտներում:	Ո՞վ եմ ես, ո՞վ ենք մենք Ո՞վ է պատմական անհատը, ո՞րն է նրա բնութագիրը:
<b>Ժամանակ եւ տարածություն</b>	- Տարածությունն ու ժամանակը՝ որպես գոյության հիմնական բնութագրիչներ: Գոյությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է «մտնենալ» տարածությանը եւ ժամանակին՝ տարբեր մարդկանց կենցաղ, նրանց պատմություններ, ճանապարհորդություններ, մարդկության պատմության շրջադարձային կետեր, հայտնագործություններ, գյուտեր, ինչպես նաեւ անհատների եւ քաղաքակրթության միջեւ հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը՝ տվյալ անձի, ազգի եւ մարդկության տեսանկյունից:	Որտե՞ղ եւ ե՞րբ:
<b>Անհատական եւ մշակութային արժեհամակարգ</b>	- գաղափարների, համոզումների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսեւորումների արժեւորում - միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում - ստեղծարարություն	Ի՞նչ է ստեղծարարությունը: Ինչպե՞ս է մարդը դառնում ստեղծարար: Որո՞նք են մշակույթն արժեւորող ուղիները: Որքանո՞վ է մշակույթը կարեւոր անհատի կյանքում:
<b>Համաշխարհայնացում</b>	- տնտեսական, քաղաքական, մշակութային համաշխարհային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց, - մարդու ստեղծած համակարգերի եւ համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային եւ տեղական գործընթացների փոխհարաբերություններ, հնարավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության եւ շրջակա միջավայրի վրա:	Ինչպե՞ս է աշխարհում ամեն ինչ կապակցված: Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները:

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի ուսումնական բնագավառների մշակման ու զարգացման եւ Կրթության նորարարությունների բաժին

## Մեր փոստից

# Կարողանալ ձեւավորել դարի մարտահրավերներին պատրաստ անհատ

2021-22 ուստարում Տավուշի մարզում տրվեց հանրակրթության պետական նոր չափորոշիչի մեկնարկը, որն ապահովում է կարողունակությունների վրա հիմնված կրթությունը որպես գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշման փոխկապակցված ամբողջություն: Ինչպես միշտ, դժվարությամբ է նորը հաստատվում, և հաստատման ճանապարհին մարդուն հաճախ կրծում է կասկածը և չհաջողվելու վախը: Նոր չափորոշիչների ներդրման մեկնարկից առաջ ուսուցիչներն անցան կարճաժամկետ վերապատրաստում գյուղացի կար ահռելի ինֆորմացիա, սակայն չկար դրանք գործնականում կիրառելու մեծ փորձ, ինչն սկզբում փոքրիկ խառնաշփոխ պատճառ դարձավ: Դրան նպաստեց նաև այն, որ փորձառու ուսուցիչների կողմից աշխատում են նաև քիչ փորձ ունեցողներ, և հաստատ դասավանդման կազմակերպման գործընթացում բախվում են խնդիրների, առավել ևս երբ փորձարկվում է նոր չափորոշիչը: Շփոթվածությունը կարճ տևեց, քանի որ աշխատանքները ուղղորդվում, վերահսկվում էին և են «42և14»-ի և «Այբ» կրթական հիմնադրամի վերապատրաստողների, մենթորների և տնօրենության

կողմից: Պարբերաբար կազմակերպվող առցանց հանդիպումները, քննարկումները, վերապատրաստումները, խորհրդատվությունները հնարավորինս օգնեցին ի չիք դարձնելու առկա դժվարությունները: Ուսուցիչը հասկացավ, որ նախ ինքը պետք է փոխի իր մոտեցումը կրթության բովանդակությանը, ապա դասավանդումը նպատակաուղղի նոր չափորոշիչի և ծրագրերի պահանջների կատարմանը:

Այսօրվա կրթության բովանդակությունը հենվում է ԳՊԶ-ի երկու առանցքային հասկացությունների կամ հիմնասյուների վրա՝ կարողունակությունների և խաչվող հասկացությունների, որոնք միտված են առավել ընդհանրական որակներ ձեւավորելու և հնարավորություն են տալիս սովորողներին ըմբռնելու, արտահայտելու, ստեղծելու, մեկնաբանելու հայեցակարգեր, փաստեր, ինքնակազմակերպվելու և արդյունավետ կառավարելու ժամանակը, ձգտելու ինքնաճանաչման, կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում, զարգացնելու տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտություններ և այլն: Ակնհայտ է, որ տնային աշխատանքների քչությունը, կիսամյակային գրավորների վերացումը, սո-

վորողների կողմից որոշ առարկաների ուսումնասիրության ընտրությունը, նպատակային խմբերով ուսուցումը, նախագծային աշխատանքների առկայությունը՝ ավելի հետաքրքիր և սոցիալականացմանը միտված, նոր առարկաները մասնագիտական կողմնորոշում, արվեստ և այլն, ավելի բազմազան և հագեցած է դարձնում սովորողի առօրյան: Սովորողն այսօր հետաքրքրված է հետազոտական ուսուցմամբ, նախագծային աշխատանքներով, որոնց իրականացման համար ստեղծված են ՔՏՃՄ առարկաների հագեցած ու համարված լաբորատորիաները: Սովորողը գիտակցում է, որ իրեն տրվում է համակարգված, զարգացնող գիտելիք, և ինքն էլ է մասնակցում սեփական ուսումնառությանը:

Կրթության նոր բովանդակությամբ պայմանավորված ուսուցիչն այսօր անում է ամեն ինչ՝ զարգացնելու սովորողի վերլուծական, համադրման, իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու հմտությունները, աշխատում դասավանդման որակի բարելավման վրա՝ այս գործում օգնության են հասնում էլեկտրոնային շատ նյութեր, պլաններ, ցուցումներ՝ տեղադրված «42և14»-ի համապատասխան էջերում: Իսկ ինչ վերաբերում

է վերահսկմանը և դասալսումներին, ապա ողջ ուսումնական տարում պարբերաբար կազմակերպվում են առարկայական, փոխադարձ դասալսումներ, դասալսումներ մենթորների կողմից, քննարկումներ, վերլուծություններ, որոնք բացահայտում, վերահանում են դասավանդման ընթացքում ծագած խնդիրները, առաջարկվում են լուծման նոր ուղիներ, որոնք ծառայում են նոր չափորոշիչի և առարկայական ծրագրերի սահմանած վերջնարդյունքների իրականացմանը, իսկ աստիճանաբար խորացող դրական փոփոխությունները տեսանելի են և չափելի:

Հավելենք, որ մեր նպատակը սովորողի ուսումնառության արդյունքների բարելավումն է, տեսլականը՝ կարողանալ ձեւավորել նոր ժամանակներին հարկի և դարի մարտահրավերներին պատրաստ անհատ:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «42և14» հիմնադրամին և «Այբ» կրթական հիմնադրամին՝ մշտապես մեր կողքին լինելու, մեզ աջակցելու համար:

**Գեղեց ԶԱՔԻՆՅԱՆ**  
Տավուշի մարզի Բերդի Մ. Սաղունյանի անվան ավագ դպրոցի տնօրեն

## Կրթությունն աշխարհում

# Մեծ Բրիտանիա

սկիզբը՝ «Կրթություն»,  
թիվ 6, 08.02.2023 թ.

## Ինչպես ընտրել դպրոց երեխայի համար

Որպես կանոն, Բրիտանիայի լավագույն մասնավոր դպրոցները գնահատվում են իրենց վարկանիշով: Դրանք հիմնված են սովորողների, ուսուցիչների, լրագրողների հարցումների վրա և, հետևաբար, շատ հաճախ լինում են սուբյեկտիվ: Օբյեկտիվ ցուցանիշները, ինչպիսիք են GCSE կամ A-Level քննությունները հանձնելու մակարդակը, ավելի են գնահատվում:

Այն դպրոցներում, որտեղ ընդունվելու համար խիստ ընտրության գործընթաց է կատարվում, վարկանիշը միշտ ավելի բարձր է լինում, քան թույլ աշակերտին վերցրած և նրա ակադեմիական գիտելիքները բարձրացրած դպրոցը, ինչը շատ ավելի արժեքավոր է:

Ուստի, ուսումնական հաստատություն ընտրելիս նախ և առաջ պետք է ուշադրություն դարձնել այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են բուհ ընդունվածների տոկոսային ցուցանիշը, սովորելու ինչպիսի հնարավորություններ է ընձեռնում հաստատությունը, արտ-ստուդիաների, գիտական լաբորիատորիաների առկայությունը, սովորողը ինչով է զբաղվում ազատ ժամանակ, կա՞ մասնագիտական պատրաստություն այնպիսի կարեւոր մասնագիտությունների համար, ինչպիսիք են բժշկությունը (անհրաժեշտության դեպքում) և այլն:

**1. Առաջարկվող ուսուցման ծրագրեր.** Հիմնական ծրագրերն են GCSE, A-Level, Foundation, Pre-U, International Baccalaureate: Ընտրությունը կախված է սովորողի հետագա ծրագրերից և տարիքից:

**2. Ուսումնասիրվող առարկաների քանակը.**

Որքան շատ լինեն այս առարկաները, այնքան դպրոցը բազմակողմանի է: Ընդհանրապես, ընդունված է, որ բարձր մակարդակի հաստատությունը սովորաբար առաջարկում է 25 կամ ավելի առարկաներ, երբեմն կարելի է ունենալ բարձր մասնագիտական առարկաներ, ինչպիսիք են իրա-

վունքը կամ տնտեսագիտությունը:

### 3. Վարկանիշ.

Ամենահակասական չափանիշը. Բրիտանիայում պաշտոնական վարկանիշներ չկան, և ուսումնական հաստատությունները մեծ ջանքեր են գործադրում այն բարձրացնելու համար: Դրանք հիմնված են սովորողների, նրանց ծնողների, լրագրողների, ուսուցիչների և այլնի շրջանում անցկացված հարցումների վրա և, հետևաբար, սուբյեկտիվ են և հաճախ չեն արտացոլում իրական պատկերը: Այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են քննության միավորները, բարձր միավորների քանակը և այլն, հեշտությամբ աղավաղվում են և հաճախ կախված են նրանից, թե ինչ տվյալներ են ներկայացվում վարկանիշը ձեւավորելու համար: Նաև անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բարձրակարգ շատ դպրոցներ ընդհանրապես չեն մասնակցում վարկանիշային աղյուսակին, ինչի պատճառով այն որակի շատ պայմանական չափանիշ է:

### 4. Սովորողների ընտրության համակարգ.

Selective (ընտրովի) ուսումնական հաստատություններում սովորողները ընտրվում են: Ընդունվում են միայն նրանք, ովքեր հաջողությամբ են հանձնել մաթեմատիկայի և անգլերենի ընդունելության թեստերը: Non-Selective (ոչ ընտրովի) ուսումնական հաստատություններում ընդունվում են բոլորը, ովքեր համապատասխանում են տարիքով: Նման խիստ պահանջները միշտ չէ, որ արդարացված են, քանի որ հաճախ դպրոցի ղեկավարությունը ջանքեր չի գործադրում աշակերտի առաջադիմությունը բարելավելու համար: Մինչդեռ ոչ ընտրովի հաստատությունները ջանում են բարելավել սովորողների գիտելիքները:

### 5. Օտարերկրացիների համար լրացուցիչ լեզուների ուսուցման կենտրոնների առկայությունը.

Շատ կարելի է գործոն: Որպես կանոն, դիմորդ-օտարերկրացու անգլերենի մակարդակը բավարար չէ, և նա չի կարող սովորել նույնքան վստահ, որքան բրիտանացի սովորողները: Անգլիայի շատ դպրոցներ օտարերկրացիների համար առաջարկում են անգլերենի լրացուցիչ դասընթացներ՝



ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով: Օտարերկրյա սովորողը անգլերենի պահանջվող մակարդակին հասնելուց հետո տեղափոխվում է ուսման հիմնական հոսք, և նա հետ չի մնում հիմնական ծրագրից:

### 6. Գիշերակաց.

Գիշերօթիկ դպրոցներն առաջարկում են կացարան բնակավայրերում: Տեղավորման տարբերակները տարբեր են, հիմնական տարբերակներից են սենյակում մարդկանց քանակը, հարմարությունների առկայությունը, ընդհանուր հանգստի գոտիների առկայությունը, խոհանոցի առկայությունը և այլն:

### 7. Կառուցվածք և սարքավորումներ.

Շատերի համար կարեւոր է, թե ուսումնական հաստատության տարածքում ինչ հարմարություններ կան, օրինակ՝ լողավազաններ, ֆուտբոլ, կրիկետ, ռեգբի, թեմիսի կամ գոլֆի դաշտեր: Ինչ-որ մեկի համար կարող է կարեւոր լինել արվեստի կենտրոններ, համակարգչային դասարաններ կամ սենյակներ, տեխնիկական և տեխնոլոգիական կենտրոններ, մասնագիտացված գրադարաններ և այլն: Սա հնարավորություն է տալիս արդյունավետ և հարմարավետ դարձնել աշակերտի արտադասարանական հանգիստը:

### 8. Գեղեցիկ դպրոցներ.

Մինչ այժմ Մեծ Բրիտանիայի որոշ դպրոցներում տղաների և աղջիկների առանձին կրթություն է իրականացվում, քանի որ

կարծիք կա, որ այս ձեւաչափն ավելի արդյունավետ է: Առանձին կրթությունը հնարավոր է ինչպես դպրոցական կրթության ողջ ընթացքում (11-ից 18 տարեկան), այնպես էլ ընդմիջումներով (համատեղ 14 տարի, այնուհետև առանձին 14-ից 16, այնուհետև 16-ից 18-ը կրկին համատեղ):

### 9. Արժեքը.

Յուրաքանչյուր աշակերտ կցանկանար ընդունվել լավագույն դպրոցը, սակայն պետք է հաշվի առնել նաև վճարի չափանիշը: Որքան շատ գործոններ կարող է ուսումնական հաստատությունը առաջարկել սովորողին, այնքան այն թանկ է: Դա հատկապես վերաբերում է ժամանցի կազմակերպմանը (լրացուցիչ միջոցառումներ և դասընթացներ): Կարելի է հիշել, որ Մեծ Բրիտանիայի պետական քոլեջում սովորելը շատ ավելի էժան է, քան մասնավորում: Ձգալի խնայողություններ կարելի է անել՝ ընտրելով Foundation ծրագիրը, օրինակ՝ A-Level կամ IB ծրագրերից: Միջին հաշվով ուսման մեկ տարին կարժեճա 20,000-ից մինչև 45,000 ֆունտ ստեռլինգ (ներառյալ կացարան, սնունդ, ուսումնական նյութեր):

**Ալիա ՍԱՐԳՍՅԱՆ**  
ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի չափորոշիչի լրամշակման և գործազման բաժնի պետ

# Անդրանիկը եւ Թումանյանը

## Հրաչիկ Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը» գրքից

1916 թվականի մարտի 25-ին Անդրանիկը թիֆլիսում էր: Կովկասի կենտրոնը համդիսացող այս քաղաքը արեւելահայ հոգեմտավոր մայրաքաղաքն էր եւ հասարակական-քաղաքական խնդիրների օջախը: Այստեղ էին հավաքվել մեր ազգի մեծերը, այդ թվում՝ զորավարի շատ սիրելի Յուզիանյան Թումանյանը: Սեփական ժողովրդի մեծ ողբերգության վշտից մի քանի ամսում ծերացած Ամենայն հայոց բանաստեղծը դարձել էր քաջախոս: Փոխվել էր նաեւ Անդրանիկը: Նա թիֆլիս էր վերադարձել կոտորված սրտով, տխուր ու ջղագրգիռ: Խուսափում էր զրույցի բռնվելուց, աշխատում էր մեռնալ մնալ:


Սակայն թիֆլիսում անկարելի էր մեկուսանալ: Անգամ պատերազմի արհավիրքներն անկարող էին մարդկանց մեջ սպանելու կենսուրախությունը, լավատեսությունն ու կատակները: Կյանքը շարունակվում էր, եւ եթե չլինեին հազարավոր արեւմտահայ գաղթականները, ապա կթվար, թե այնտեղ ոչինչ չէր փոխվել: Թիֆլիսյան մթնոլորտը Անդրանիկին

աստիճանաբար դուրս բերեց հոգեկան ծանր վիճակից. նա դարձավ Թումանյանի հետ էր:

Որքան անքուն գիշերներ են նրանք միասին անցկացրել, որքան քաղցր զրույցներ են ունեցել: Թումանյանն ինքը, լինելով շնորհաշատ պատմող, մեծազույն բավականությամբ էր լսում Անդրանիկին, հիանում նրա մտքի պարզությամբ, երեւոյթների մեջ թափանցելու ակնառու շնորհով, անկոտրուկ կամքով ու հերոսականությամբ: Բանաստեղծի համար Անդրանիկը դարձավ անկասկած կերպար էր, կենդանի առասպել: Ակնատեսները հետաքրքիր հուշեր են թողել հերոսի՝ թիֆլիսյան այդ շրջանի առօրյայից:

Թումանյանի դուստրը՝ Նվարդը, պատմում էր, թե Անդրանիկն ու իր հայրը ինչպիսի հաճելի պահեր էին պարգևում միմյանց: «Հայրիկը Աղայանից հետո մտերիմ ընկեր, կարելի է ասել, չունեցավ: Անդրանիկը, ըստ էության, բանաստեղծի ամենամոտ մարդն էր»,- գրել է Նվարդ Թումանյանը:

Երկու մեծերի ջերմ բարեկամության մի քանի դրվագների իր




հուշերում անդրադառնել է մեր գրականության լուսավոր դեմքերից մեկը՝ Վահան Թոթովենցը (ով զորավար Անդրանիկի մտերիմներից էր, նրա թիկնապահ-թարգմանիչը, իսկ 1917-1918 թվականներին թիֆլիսում խմբագրել էր զորավարի հրատարակած «Հայաստան» թերթը): «Երկար խոսում էին այս երկուսը իրար հետ, բազմաթիվ անեկդոտներ, բարբեր, սովորություններ, ասացվածքներ, առակներ, հեքիաթներ էին իրար հաղորդում, մեկը՝ Լոռուց, մյուսը՝ Սասունից: Ի վերջո նրանք եկան այն եզրակացության, որ լռեցիները սասունցիներ են եղել...»: Սեկ այլ դրվագ. «Մի օր մենք ներս մտանք այն պահին, երբ Անդրանիկը պատմում էր ինչ-որ կռվի պատմություն: Թումանյանը կանգնած էր, մի ոտը դրած թախտի վրա, թեւերը բարձրացրած վեր, փայլուն,



արծարծուն աչքերով լսում էր: - Թուրս քաշեցի՜...,- ասաց Անդրանիկը եւ կանգ առավ: Նա ուներ այդպիսի սովորություն...- ժամանակ էր տալիս, որ լսողն ընդգրկի պահը: Բայց Թումանյանը չհամբերեց եւ սկսեց գոռալ. - Խփիր, խփիր»: ... «Մի օր էլ էլի սեղանի շուրջը Թումանյանն առաջարկեց խմել Անդրանիկի կենացը եւ ինքը վերցրեց առաջին խոսքը: - Սրանից քսան տարի առաջ, - ասաց Թումանյանը,- կար երկու նշանավոր բան՝ Խրիմյան Հայրիկը եւ իմ «Շունն ու կատուն»: Քսան տարի է անցել, բայց էլի երկու նշանավոր բան կա. իմ «Շունն ու կատուն» եւ Անդրանիկը. խմում են երկու նշանավորներից մեկի՝ Անդրանիկի կենացը: Բոլորն էլ սկսեցին ծիծաղել: Անդրանիկն էլ ծիծաղեց: Անդրանիկը Թումանյանին պատասխանեց. - Կանցնեն տարիներ, ոչ ես կլինեմ, ոչ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն»: խմենք նրա կենացը»:

# Խոսում, մտածում, պահանջում է Անդրանիկը



Տարիներն ի վեր հայ զինվորը բարձր բռնեց իր անունը եւ պատիվը: Սասունն սկսյալ մինչեւ Պալքանյան պատերազմը եւ անկե մինչեւ Ջանկեզուր, Սիսյան, Խափան ու Ջապուխ, Հեքերիլու գետերը Կովկասի ճակատին վրա ձեր մարտնչունները աշխարհի հիացուցիչն: Ֆերիք, Ալի, Յավեր, Ալիհիսան, Խելիլ, Վեհիպ եւ Նուրի փաշաները եւ անոնց ամենախեղձ զինվորներն իսկ տեսան ու ճաշակեցին ձեր մարտնչունները...

Տխուր պահս՝ 1907-ին, երբ Գեւորգին (Գեւորգ Չավուշին) մահվան լուրը հասավ ինձի:

Ուրախ պահս՝ 1904-ին, երբ Սշո դաշտին մեջ Սբ. Հովհաննեսի վանքին տակ գտնված գոմերու կռիվը կը մղեի տասնեյրոր զինվորներու հետ 1800 թուրք եւ քուրդ ուժերուն դեմ (1500-ը կանոնավոր զինվորներ էին):

Այս կռվին մեջ մեզի հետ էին երկու հայ կիներ, որոնք դիրքեր կը շինեին մեզ համար եւ Խաս գյուղացի տեր Քերովբե քեյն, որ գեներ ձեռքին կը կռվեր թշնամիին դեմ:

Երբ երկաթե կամրով մե մաքուր հայրենասիրությամբ այս փոքրիկ խումբը կը կռվեր, հաղթանակը շահելով, այդ պահը իմ ամենաուրախ օրն էր:

Մարդ ոչ հերոս, ոչ ալ կռվող կծնի, գեներն է, որ մարդուն կռվելու ընդունակություն կու տա եւ դիմադրության ոգի կը ստեղծե անոր մեջ:

Ոչ թուրքական հրացանները, ոչ ցուրտն ու քամին կրնային սարսափեցնել եւ մարել կրակը մեր սրտեն, երբ դեռ երեկ արցունքի եւ վրեժի հետ սիրելի Ղազարը թաղեցինք: Պետք է սպաննել, սպաննել շարունակ, լուծելու համար վրեժը ամեն անոնց, որոնք ինկած էին: Տարափի պես տեղացող հազարավոր զնդակներ կը սուլեին, կ'անցնեին մեր գլուխներուն քովն, մեր ոտքերուն առջեւն, բայց վանքը հոն էր, տիրական եւ հզոր: Մենք երբեք չթերացանք, երբեք չընկ-

ճեցանք, այլ մեր խիզախ կեցվածքով թշնամիին թուլցած եւ վիատած բազուկներուն հուսալքում պատճառեցինք, զոհեր խլելով:

«Մարտական հրահանգներ», 1906

Սիրելի Հովհաննեսս, Ես հրճվանքով կարդացի նամակը: Հասած է ժամը, որ բոլորը նմանին քեզի, տրամադրելի ընելով իրենց զավակները ու դրամը հայրենիքի պաշտպանության գործին:

Պետք է մոռնանք պահ մը, գրիչը փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կծաղկի գեղարվեստի կյանքը:

Ես շատ զգացված եմ թու բարձր տրամադրությունները եւ կը հուսամ, որ մեր բովանդակ մտավորականությունը կը հետեւի թու օրինակին եւ այսպիսով կը դարբենեք մեր սրբազան ազատությունը:

«Հայաստան», թիվ 183 23.12.1907 թ., Թիֆլիս

Լեւոն, տպարանս կը փոխադրինք Հայաստան, Առաքելոց վանքը, կ'ուզեմ հոն մեռնիլ եւ թողվիլ Թարգմանիչներու գերեզմաններուն ոտքը, ոչ որպես անոնց քով պառկելու արժանիքով մեկը, այլ որպես պահակ զինվոր մը այդ մեծ մարդկանց, որված այն ազգին կողմը, որ անոնց վառած ջահին շնորհիվ դարբերով պահած է ինքզինքը:

Ուղղված է 1917-ին Թիֆլիսի իր հրատարակած «Հայաստան» թերթի խմբագիրներից Լեւոն Թուրունջյանին

Կուզեմ, որ իմ աճյուններս հանգչին Արաքսի կամ Ջանգուի ափին, իմ սիրելի ժողովուրդիս մեջ, որուն ազատության համար կռվեցա:

Եթե այս անգամ ցավը զիս տանի, մարմինս օտար հողի վրա չթողու... անպայ-

ման Հայաստան փոխադրեք: Եթե կարելի չըլլա փափագս իրագործել, մարմինս Վառնա տարեք եւ թաղեք քոջս՝ Նազելիի գերեզմանի քով:

Երբ մեռնեմ, ինձ կթաղեք Առաքելոց վանքի դռների առջեւը, ուր կզան աղոթելու ու մոմեր վառելու, իսկ ես նրանց սուրբ հողի տակ կլինեմ, կլսեմ անոնց ոտքերու ձայները:

- Անդրանիկ ջան, քեզի պես գեներով չեմ կռվել, բայց ինչքան որ կը հասկնամ, երգն էլ գեներից պակաս չէ:

- Իհարկե, երբեմն ավելի զորեղ է: (Շերամի եւ Անդրանիկի միջեւ մի զրույցից):

Իլլիչ Բեգլարյան, «Հայդուկներ», Երեւան, 2010

Եթե հայ ժողովուրդը կուզե ինձ պատիվ մը ընել, ես իմ արձանս չեմ ուզեր, փառավոր թաղում չեմ ուզեր, թող հայ ժողովուրդը կանգնեցնի ավերակ դարձած Առաքելոց վանքը եւ այնտեղ հիմնե փոքրիկ ուսումնարան մը հայ մանուկներու համար,- այս է իմ ամբողջ բաղձանքս եւ բարոյական պահանջս հայ ժողովրդեն:

Ղարաբաղցիներ եւ գանձակցիներ, չհաջողեցանք մտնել ձեր պատմական երկիրը: Տարեք իմ ողջույններու ձեր քաջ ժողովրդին եւ իմ կողմեն ըսեք, որ երբեք գլուխ չծնեն մեր ցեղին ոսոխին առջեւ:

Այժմ մեր բազմաչարչար եւ հալածված հայ ժողովուրդը ունի իր հայրենիքը... Պետք է ուժ տալ Հայաստանի շինարարական ձեռնարկներուն եւ գորացնել զայն՝ իբրեւ մեր ապագա հույսերու խարիսխը...

Գեւորգ Ղարաբաղյան, «Ժողովրդական հերոս Անդրանիկ», Երեւան, 1990



# Անդրանիկ Օգանյանի մասին

Անդրանիկ, քաջ զավակ հայ ժողովուրդի, դուրս ազատության զինվոր, դուրս արդար բազուկ, դուրս պաշտպան հավատո եւ հայրենյաց, դուրս մեր պատմության քարայրներեն լույս աշխարհ եկած նոր օրերու Միեր. ահավասիկ ես՝ Հայոց Հայրապետը, քեզի կուզամ Ա. Էջմիածնեն, հայոց աշխարհեն եւ քեզի ողջույն կը բերեմ:

...Հայրենիքեն ափ մը հող եւ չբերի հետս գերեզմանիդ, վասնզի հոգիս կը վկայե, թե հեռու չէ այն օրը, երբ ինքը՝ հայրենի հողը իր կուրծքը պիտի բանա եւ ընդունի աճյուններդ, դուրս հոն պիտի հանգչիս հավիտյան:

## Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա 1965 թ. փետրվարի 4, Փարիզ, Պեր Լաշեզ գերեզմանատուն

\*\*\*

Կամավոր նահատակների մի ընտիր խումբ, որ պայքարի մտավ քառորդ դար առաջ, եւ որոնց շարքերից էր Անդրանիկը, նույնքան անձնագրի էր, որքան սա: Նոր մարտական հայության առաջին ծիլերն էին, անեն մեկը՝ ընտրված հազարի միջից, ամեն մեկը՝ մի գորավոր անհատ, բայց այդ ընտիրների եւ գորավորների մեջ աչքի ընկավ Անդրանիկը: Այդ փայլուն շարքն ունեցավ բազմաթիվ հետեւորդներ, որ իբր տիպար, իբր նոր տեսակը հայության՝ իրենց խորքով տարբեր էին նրանից, բայց նրանց շարքում միակն եղավ Անդրանիկը, որ ստացավ համազգային հերոսի հռչակ եւ անուն: Նույնն էր բարոյական խորքը, բայց տարբեր էին խառնվածքն ու կարողությունները:

Անդրանիկը մեռավ իր փափագին չհասած, որ ազգինն էր միանգամայն, բայց նա երկար ու անձնվիրաբար ծառայեց համազգային նպատակին, ուստի իր անունն ու հիշատակը դարձան համազգային:

## Նիկոլ Աղբալյան

\*\*\*

Խրիմյան Հայրիկեն ի վեր մեր նոր ժամանակներուն մեջ ոչ մեկ հայ չէ եղած, որ այնքան խորապես բնագործեն, անվերապահորեն սիրված ըլլա ամբողջ ժողովուրդեն, որքան Անդրանիկը: Անիկա բնութենեն օժտված էր, ինչպես Հայրիկը, առնական ու միանգամայն հանկուցիչ գեղեցկությամբ մը եւ հոգիներուն վրա ազդելու, սիրտերուն տիրելու, ժողովուրդը մը իր հետեւեն քաշելու կարողությամբ:

## Արշակ Չոպանյան, 21 սեպտեմբերի, 1927 թ.

\*\*\*

Մայր բնությունից եւ բախտից պարզեւատրված բացառիկ անհատներից էր Անդրանիկը, եւ բացառիկ վիճակի արժանացավ նա հայոց պատմության մեջ: Եթե ժողովրդական կամ ազգային հերոս բառը որոշ իմաստ ունի, «Անդրանիկը եղավ բառիս ամենալայն մտքով ազգային հերոս, որի ճակատը դափնե պսակով զարդարեցին «Հայոց կուսանք», եւ հայ աշուղները փառքի երգեր ձոնեցին նրան:

## Սիմոն Վրացյան

\*\*\*

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ Անդրանիկը ամենավիպական, ամենափայլուն ռազմական դեմքն է, որ փոթորկեց հայ ժողովրդի հերոսատենչ հոգին: ... Ինչպես հրաբուխը ժայթքում է լեռան անդնդախոր արգանդից, այդպես էլ Անդրանիկը ժայթքեց հայ ժողովրդի սրտից՝ որպես վրիժառու ըմբոստության հոյակապ մարմնացում: Թշնամուն պատուհասող նրա սուրը հայրենի հողի վրա երբեք պատյան չմտավ: Անդրանիկ ռազմիկ էր ոտից գլուխ:

## Վարդգես Ահարոնյան



\*\*\*

Եթե Անդրանիկը ծնված լիներ հին հելլենական շրջանում, Հոմերոսը, վստահաբար, նրան նվիրված դյուցազնավեպ գրած կլիներ, ինչպես երգեց Աքիլլեսի սիրագործությունը: Նա, տակավին, սպասում է Ֆրանց Վերֆելի պես այն վիպասանին, որը կտավի վրա առնի Հայաստանի Արծվի հերոսական դեմքը, անվախ խոյանքն ու արդարակրող կողմն:

## Անդրանիկ Փուլադյան

\*\*\*

Հայերեն խոսել եւ չսորվեցա, մինչեւ որ մեծ մայրս մեր տունը եղավ ու ամեն առավոտ երգեց զինվոր Անդրանիկի մասին, եւ մինչ օրս ես գիտցա, թե ան հայ մըն էր, լեռնական գեղջուկ մը, որ սեսաթույր ծի մը հեծած՝ ափ մը մարդոցով կը կռվեր թշնամիների դեմ...

## Վիլյամ Սարոյան

\*\*\*

Իմ սերունդը Անդրանիկի մասին շատ քիչ բան գիտի, չասելու համար՝ համարյա բան չգիտի: Սրա համար կարելի է ամոթից գետնից մտնել, որովհետեւ Անդրանիկի մասին բան չիմանալը հավասար է հայ ժողովրդի նորագույն պատմությանը անգետ լինելուն: Բայց ամոթից գետնից պիտի մտնենք ոչ թե մենք, որ մի ամբողջ սերունդ ենք, այլ նրանք, որոնց վզին է ընկնում մեր այս անգիտության բացատրելի, բայց անբավելի մեղքը...

## Պարույր Սեւակ

\*\*\*

Աշխարհում չկա մի հայ, որի սիրտը չթրթռա՝ արտասանելով այս պաշտելի անունը՝ Ջորավար Անդրանիկ:

Ջորավար Անդրանիկը հայ ժողովրդի ազգային հերոսն է: Նա մեր ժողովրդի պարծանքն է, մեր պատմության ամենաթանկագին գոհարներից մեկը: Այդ մասին լավ գիտեն Սովետական Հայաստանում ապրող հին սերնդի ներկայացուցիչները, բայց նոր սերունդը, դժբախտաբար, համարյա անտեղյակ է: Անդրանիկը մեր նոր սերնդի գիտակցության մեջ մի աղոտ, մշուշապատ եւ այլալված կերպար է, որի նմանությունն իր իրականի հետ շատ հեռավոր է:

Չայնակցելով սիրելի Պարույր Սեւակին՝ ես կավելացնեի, որ այդ «անբավելի մեղքի» «բացատրությունը» ոչ ոքի չի արդարացնի հետագա սերունդների առաջ եւ չի փրկի պատմության դատաստանից, եթե մենք այսօր չքավենք այդ:

...Ջորավար Անդրանիկի կյանքն ու գործունեությունը մեր պատմության ամենափայլուն էջերից է, որը, սակայն, մեր քառասունամյա պատմության մեջ անարդարացիորեն անտեսվել է եւ գիտակցաբար խեղաթյուրվել: Ժամանակն է վերջ տալու այդ կեղծ գիտական, ավելի ճիշտ՝ հակագիտական եւ ապագիտական ուղղությանը, եւ գր-

ավար Անդրանիկի պատմական, քաղաքական, ազգային եւ հասարակական կերպարը վեր հանելու ըստ արժանվույն, առանց, սակայն, նոր աղավաղումների, այնպես, ինչպես որ եղել է գորավար Անդրանիկ եւ կա հարազատ հայերի սրտում:

## Հակոբ Անասյան

\*\*\*

... Անդրանիկը Մասիսի գագաթի պես բարձր տիպարն է: Նա հայության տիպարն է դեմքով, հասակով, անվեհերությամբ, արիությամբ: Նրա հոգու շանթահար սլացքը, հավատի պողպատն ու դիմադրողականության բրոնզը, որպես սիմվոլ պիտի վերածվեն արձանի մը՝ ներքե գրված Անդրանիկ: Անոր դաշույնի վրա գրված էր.

«Մեղքը մերը չէ, եղբայր, անե՛ծք դու՜ մանին,

Նա պարզեց դրոշը արյունոտ մարտին»:

Երեսուն տարվա մեջ ահել մարտերում թշնամու գնդակը իրեն չհասավ: Ջորավար Անդրանիկը քաջ մոգական հմայք կամ դյուցազնական ազդեցություն ուներ իր թշնամիներու եւ դարանակալներու վրա: Անդրանիկի ամանց նվիրվածությունը հայրենիքի ազատության պաշտամունքն էր, որ փառքի բոլոր դափնիների Լուսատու պսակը դրին անոր գլխին:

## Կարապետ Սիտակ

\*\*\*

Ես երբեք այլեւս չհանդիպեցա նման սքանչելի խումբ մը: Ջարմանալի ներդաշնակություն մը եւ համերաշխություն մը կար անոնց մեջ, ավելի կարծես նահապետական մեծ ընտանիք մը, հարազատ եղբայրներ լինեին, հոգատար իրար հանդեպ, գուրգուրող եւ ուշադիր:

Անդրանիկ անուն դարձել էր սիմվոլ մը կռվող Հայաստանի: Դժվար թե գտնվեր անենահետ գյուղի մը երդիքը, որ չերգվեր Անդրանիկը, որ արդեն անձ մը չէր այլեւս, այլ ազգային, լեզենտական հերոս մը, բոլոր հերոսները մարմնավորող:

## Մալխաս

\*\*\*

Անդրանիկը՝ տեղանքի եւ թշնամու էության գերազանց իմացությամբ, իր ռազմական փորձով ու խորհուրդներով իմ ջոկատում եղած ժամանակ բազմիցս մատուցել է անգնահատելի ծառայություններ: Անձամբ խենթորեն խիզախ մարդու նրա նշանաբանն էր՝ հարձակում: Բացի այդ, իր մեծ վստահությամբ Անդրանիկը գերազանցորեն ազդում էր անվարժ զանգվածի վրա եւ համառությամբ ու կամային ուժով կարգուկանոն պահպանում խմբում:

## Թովմաս Նազարբեկյան

\*\*\*

Մեծ է Անդրանիկի մասնակցությունը մասնավորապես օսմանյան բռնապետության դեմ մղված ազատագրական պայքարում:

Հայ ազատագրական պայքարն ուղղակի պատասխանն էր օսմանյան իշխանությունների կիրառած բռնությունների, կողոպուտների ու մեթոդիկ ցեղասպանության քաղաքականությանը Հայաստանում:

Հայ ժողովուրդը չէր կարող չզիմել գինված պայքարի իր ինքնապաշտպանության ու գոյատևման համար, հայրենիքի ազատագրման համար, ապագա սերունդների բախտի համար: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, այսպիսով, իր բնույթով արդարացի առաջադիմական, հեղափոխական պայքար էր:

Այդ պայքարի ծնունդ էր նաեւ Անդրանիկը, նրա գլխավորած աշխարհագրորային շարժումը: Անդրանիկը բնածին տաղանդի տեր մարդ էր: Ժողովրդի խորքից դուրս եկած լինելով՝ նա ամբողջովին նվիրվել էր հայ ժողովրդի ազատագրության, հայկական պետականության վերստեղծման գա-

ղափարի իրականացման գործին:

Մենք հպարտանում ենք Անդրանիկով եւ անցյալի բազմաթիվ քաջ հայորդիներով: Հպարտ ենք նաեւ, որ Անդրանիկի կրծքում վառվող կրակը չմարեց, այլ ուժեղանալով՝ հայ զինվորներին վերջին աշխարհամարտում հայկական եւ խառը դիվիզիաների կազմում տարավ մինչեւ Բեռլին, որ այդ կրակը, հանձինս մարշալ Բաղրամյանի, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, օդային ուժերի մարշալ Սերգեյ Խամփերյանցի, գրահատակային զորքերի մարշալ Համազասպ Բաբաջանյանի, ճանաչվեց բոլոր ժողովուրդների եւ ամբողջ ազատասեր մարդկության կողմից:

## Վիկտոր Համբարձումյան

\*\*\*

Մանկական եւ պատանեկան տարիներից եւ շատ եմ լսել Անդրանիկի ժողովրդական խիզախ տաղանդի, ժողովրդին նրա անսահման նվիրվածության եւ մեծ հայրենասերի բարձր հատկությունների մասին:

## Հովհաննես Բաղրամյան

\*\*\*

... Յուրաքանչյուրը, ով կարող է, պետք է գրի, պատմի, երգի Անդրանիկի մասին, որովհետեւ այդպիսի իսկական ազգային հերոսներն աշխարհ են գալիս ոչ այնքան հաճախ:

## Հովհաննես Իսակով



# Անդրանիկը արվեստում

Անդրանիկ Օզանյանի մասին բազմաթիվ երգեր ու առասպելներ են հյուսվել դեռևս նրա կենդանության օրոք, արվեստի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ անդրադարձել են Ձորավարի կերպարին:

Գերոսին նվիրված գործեր են ստեղծել հայ գրականության մի քանի կարկառուն դեմքեր: Արեւմտահայ բանաստեղծ Սիամանթոն գրել է «Անդրանիկ» վերնագրով բանաստեղծություն, որը տպագրվել է Ժնևում, 1905 թ.: Առաջին գիրքը Ձորավարի մասին լույս է տեսել նրա կենդանության օրոք. 1920 թ. Կ.Պոլսում, Վահան Թոթովենցը (Արսեն Մարմարյան ստորագրությամբ) լույս է ընծայել «Ձորավար Անդրանիկ եւ իր պատերազմները» գիրքը: Ամերիկահայ հռչակավոր գրող Վիլյամ Սարոյանը գրել է մի կարծ պատմվածք «Անդրանիկ Հայաստանի» վերնագրով, որն ընդգրկված է նրա «Ներշնչում եւ արտաշնչում» խորագրով պատմվածաշարում (1936 թ.): Անդրանիկի եւ այլ ֆիդայիների մասին է Համաստեղի «Սպիտակ ծիավորը» վեպը: Հովհաննես Շիրազը Անդրանիկի մասին գրել է «Անդրանիկի սուրը», «Սպիտակ ծիավորը Փարիզում» եւ «Արծան Անդրանիկին» (լույս է տեսել 1991 թ.): Շիրազի մահվանից հետո) ստեղծագործությունները: Սերո Խանգադյանի «Անդրանիկ» վեպի տպագրությունը խորհրդային տարիներին կասեցվել է. այն լույս է տեսել 1989 թ., երբ խորհրդային գրաքննությունը թուլացել էր: Մինչեւ 1960-1980 թթ. բարբառազետ-բանահավաք Սու-

րեն Սահակյանը Արեւմտյան Հայաստանի վերապրողներից գրառել ու մշակել է «Ասը Անդրանիկ զորավարի մասին» վիպապոեմ. հրատարակվել է Երեւանում, 2008 թ.: Կան նաեւ հերոսին նվիրված այլ գրական գործեր:

Ձորավարի մասին նկարահանվել են մի շարք վավերագրական ֆիլմեր: Դրանցից են «Անդրանիկը» (1929), Արմենա-ֆիլմ, Ֆրանսիա, ռեժիսոր՝ Արշո Շահաթունի, ով նաեւ խաղացել է գլխավոր դերը, 1990-ին՝ «Ձորավար Անդրանիկ» (Հայֆիլմ) վավերագրական կինոնկարը՝ նվիրված զորավարի ծննդյան 125-ամյակին (տեքստը կարդում է Խորեն Աբրահամյանը) եւ այլն:

Փանոս Թերլեմեզյանը, ով նույնպես մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին, 1925-ին ստեղծել է «Ձորավար Անդրանիկի դիմանկարը» կտավը: Ձորավարի արձանները տեղադրված են ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի մի շարք այլ երկրներում:

Անդրանիկին նվիրված բազմաթիվ երգերից արժանահիշատակ են «Արծիվի պես» (Գուսան Շերամ, 1904), «Անդրանիկ փաշան» (Գուսան Հայրիկ, 1913) ստեղծագործությունները:

Կովկասում հայ աշուղներ կային, որոնք ազգային հերոսներին երգեր էին ձոնում՝ հոխորտալի, զավեշտալից չափազանցություններով. այդ երգերով ամբոխն անսահման խանդավառվում էր: Մի օր՝ Թիֆլիսում եղած ժամանակ, երբ Անդրանիկն իր տանն էր, մի աշուղ փողոցով անցնելիս երգում



եր հերոսին նվիրված երգերից մեկը՝ հետեւյալ տողերով.

«Գերոս մընչաց, Սուլթան գոռաց, Կիլիկի մի աչքից արտասուք շողաց»:

Անդրանիկը զայրացած բացականչեց պատշգամբից. «Շան որդիներ, այդ ինչ ամոթալի չափազանցություն է...»:

Անդրանիկին նվիրված իր հուշ-խոհագրության մեջ զավեշտական մի դեպք է նկարագրել Ավետիս Ահարոնյանը: Կամավորական գնդերի լուծարումից հետո հերոսը որոշ ժամանակ ապրում էր նրա տանը: Մի օր բակում լսվում է աշուղների սագի ու երգի ձայն: «Պատշգամբից վար նայեցի,- վեր-

հիշել է Ահարոնյանը,- երգիչը մի կույր ծեր աշուղ էր, որին առաջնորդում էր հաշմանդամ ոտքերով մի ծոռնված թշվառ: Երգը ռամիկ պարզություն ուներ, որ վերջանում էր հետեւյալ հանգերգով՝

«Գնանք Անդրանիկին օգնության»:

- Անդրանիկ, արի՛, արի՛,- գոչեցի ես:

Դուրս եկավ, նայեց վար:

- Հայ, Աստված ծեր տունն ավրի,- ասաց նա,- թե սրանք պիտի օգնեն, վա՛յ Անդրանիկին:

Ու սկսեց քրքջալ՝:

Սրանք, ինչ խոսք, զավեշտական պատմություններ են, բայց ցույց են տալիս ժողովրդի ան-

սահման սերը հերոսի հանդեպ:

Իսպանահայկական արմատներով (հոր տատը հայ էր՝ ծնունդով պատմական Հայաստանի երգում նահանգից) ֆրանսիացի մեծ կատակերգակ Լուի դե Ֆյունեսը հաճույքով էր լսում գորավար Անդրանիկին նվիրված երգերը, իսկ ամեն տարի՝ ապրիլի 24-ին, պարտադիր այցելում էր Պեր Լաշեզ գերեզմանատուն եւ իր հարգանքի տուրքը մատուցում մեծ Ձորավարի հիշատակին, ծաղիկներ դնում նրա շիրմին:

**Հրաչիկ Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը» գրքից**

# Սա մե՛ր Անդրանիկն է



Երբ մարտի դաշտում էր, բոլորը խուճապահար փախչում էին նրանից, իսկ հազվադեպ խաղաղ օրերին ինքն էր խուսափում բոլորից՝ կրապաշտության ցույցերին տուրք չտալու համար:

Վկայողը Ավետիս Ահարոնյանն է.

«...Այդ օրերումն էր, որ մի անգամ Հ.Թումանյան եկավ առաջարկելու, որ Անդրանիկի հետ միասին Մուշտեղի կոչված այգին զնանք ժամանակ անցընելու:

- Ադա՛,- ասաց կենսուրախ ու անուշ բանաստեղծը,- տանենք Անդրանիկին մի լավ խորոված ու տացնենք, քեֆ անենք. ես տեղը գիտեմ:

- Շատ լավ,- ասացի,- զնանք:

Լի օր էր, եւ վստահ էինք, որ մեզ ոչ ոք չի խանգարի: Հասանք. հաճելի ժամանակ անցըրինք պարտեզի ծառերի տակ. ասում, խոսում, ուրախանում էինք, վստահ, որ մեն-մենակ ենք, եւ որեւէ անհանգիստ աչք չի դիտում մեր սրտաբաց զեղումները:

Ու մեկ էլ ինչ տեսնենք, փայտե ցանկապատի վրայից բազմաթիվ աչքեր մեզ են հառած, ավելի ճիշտ՝ Անդրանիկին, որի անունն էր հնչվում չորս կողմից:

- Ծո, այս անաստվածները ի՞նչպես իմացան,- ասաց Անդրանիկ ժպտալով:

Ով կասի երբեք, թե ինչպես իմացան, եւ մեծ մասամբ օտարազգիներ էին: Մեր ուրախությունը փճացավ: Թողինք դուրս

եւանք. քայլում էինք հանդարտ, մինչ անծանոթ մեկը նայում էր Անդրանիկին. հեռացած էինք այգուց, երբ քրթմնջույն լսելով՝ հետ նայեցի եւ ինչ տեսնեմ - տասնի չափ մանուկներ, հազիվ յոթ-ութ տարեկան, գլխաբաց, դեմքերն անվա, քիթերը թաց, ոտաթուփիկ ու իրար հրիդելով՝ մեզ հետեւում են կրնկակոխ. մեծ մասամբ ռուս մոլոկանների շիկահեր երեխաներ են. բայց սրանց մեջ կենտրոնում մեկը կա, թխադեմ, սեւաչյա, խոփ սեւ մազերով, եռանդուն ու հրամայական շարժ ու ձեւով, որ աշխատում է ճիշտ Անդրանիկի քայ-

լերին հետեւել եւ ձեռքերը տարածած ընկերակիցների առաջ՝ սատուում է նրանց.

- Վա՛, ուր եք գալիս, սա մե՛ր Անդրանիկն է, զնացե՛ք:

Հայարտ էր հայ մանուկը, փողոցների փոշու ու աղբի մեջ թաքավում այդ երեխան, որ բախտ ունի Անդրանիկի, «մե՛ր Անդրանիկի» հետեւից քալել... Հայ ժողովրդի ոգին էր խոսում այս մանուկի մեջ:

Ոչ միայն հայության, հապա եւ մեր թշնամի ցեղերի համար Անդրանիկ առասպելական աժդահա էր...»:

**Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ**





## Չորավարի հրաժեշտի խոսքը

Չորավար մեծարող զինվորներ շատ են եղել ու միշտ կլինեն: Բայց զինվորին մեծարող զորավարը դու էիր ու միայն դու: Ծնունդդ շնորհավոր:

### «Չինվորներուս

Սիրելի՛ Չինվորներս,

Վերջին տխուր դեպքերուն առջեւ երբ կը կարմրիրք, ու երբ օտարներ կը փորձեն անվանարկել ձայն զինվորին արժանապատվությունը, դուք ձեր քաջությունը, ձեր պատմությունը քաջեցեք կը ցցվիք՝ արհամարհելով զանոնք, բարձր բռնելով ձայն զինվորին եւ ձայն ցեղին արժանապատվությունը: Դուք գիտցաք կռվիլ անոր համար, որ կը հասկնայիք կռվիլն արժեքը. դուք կը քաջ պարտության մատնել բռնանաին եւ հիացում հրավիրել

դել ձեր վրա, անոր համար, որ գիտեիք նվիրվիլ եւ գիտեիք ծառայել Չայրենիքին եւ անոր ազատության:

... Ի՞նչ բան էր, որ մղեց ձեզ թողուլ ձեր տուները, ձեր գործերը եւ հանգիստը՝ երիտասարդ կյանքի վայելքներուն հետ, եւ գալ պատերազմի դաշտ շակելու ձեր հրացանն ու տուրիկը: Ես կը զգայի եւ կը հասկնայի ձեր զոհաբերումներուն արժանիքը եւ իմաստը: Ես գիտեի, թե որքան ծանր էր ձեր վրա ճնշող պատասխանատվությունն ու պարտականությունը:

Մեծ համբերությամբ կը քննարկեիք ձեր չարչարանքները եւ մեծ հավատով տարիք ձեզի հանձնված գործը: Ես չլսեցի տրտունքի ոչ մեկ բառ, ցավի ոչ մեկ արտահայտություն: Մերկ էիք, ամո-

թի մնացիք օրերով, ծմրան ցուրտը, բուքն ու քամին, ծյունն ու անձրեւը կարկուտին հետ ծեծեցին ձեզ, նեղեցին ձեզ, բայց դուք արհամարհեցիք զանոնք՝ բռնամիտ գնդակներուն հետ: Ձեր այս կեցվածքը քաջալերեց գիս, ուրախացուց սիրտս, եւ մենք կրցինք շահիլ փառավոր հաղթանակներ ՀԱՅ ԱՆՈՒՆԻՆ ՀԱՄԱՐ:

... Օտարը հիացավ ձեր վրա, հիացավ ձեր հրամանատարն ալ եւ բերկրեցավ ձեզ համար, ու վստահ ձեր Չայու հզոր բազուկներուն՝ նոր հաղթանակներու դիմեց...

Ի՞նչ վսեմ սեր ու մաքուր զգացում էր որ ունեիք դուք ձեր կուրծքերուն տակ: Ես բոլոր դժվարություններուն մեջ ձեր դեմքերուն վրա հրճվանք կը տեսնեի, երբ ասկե ու անկե Չայ մա-



նուկներ եւ Չայ գաղթականներ հավաքելով ինձի կը բերեիք: Դուք ձեր հացը, ձեր հագուստը եւ հանգիստը կը տրամադրեիք անոնց երջանկության, անոնց

բարօրության եւ հանգստին համար... Թշնամիին անկունը ձեր հրճվանքը էր եւ Չայու մը ազատագրումը՝ ձեր ժայտը:

Ինչպե՞ս ձեզմե շատերը: Անոնց աճյունները խառնվեցան մայր հողին: Խուսկոյլ ու աղոթքով օրհնված ու սրբացած քար մը չդրին անոնց վրա, աղոթք եւ սաղմոս չկարդացին, այլ միայն հովը սուլեց՝ փայլախաղձով անոնց սեւ ու սիրուն վարսերը...

Սիրելի՛ Չինվորներս,

Սա մեկ քանի տողերս իր հարգանքի եւ գնահատանքի նշան ձեզի կը թողու՝ իր կտակ եւ սրտածոն ապրողներուդ եւ իր տապանաբար՝ անթաղ եւ անչիրիմ զինվորներուս...

Անդրանիկ, 1921թ.»

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ

## Անդրանիկի ձին

### Իլիջ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ «Չայրուկներ» գրքից (կրճատումներով)

Փառքի ու պատվի հասած շատ հերոսներ փառաբանել են իրենց հավատարիմ ու անբաժան ձիերին՝ իրենց հաղթանակների գրավականը համարելով նաեւ նրանց: Այդ արարածներն իրենց մեջքերի վրա տարել են մարդկության պատմության այնպիսի հսկաների, ինչպիսիք են Ալեքսանդր Մակեդոնացին եւ Չանհրեալը, Նապոլեոնն ու Մուսկոլորովը, Վարդան Մամիկոնյանն ու Անդրանիկ Օզանյանը: Վերջինս մի առանձնակի սեր ու գորովանք էր տածում իր ձիու՝ իր հավատարիմ ընկերակցի՝ Ասլանի նկատմամբ:

Ականատեսները պատմում են, որ վճռական պահերին զորավարը մի պահ առանձնանում էր, շոյում իր սիրելի ձիու՝ Ասլանի բաշն ու նրա թամբին նստելով՝ սուրը մերկացրած, զնդակից էլ արագ սլանում դեպի թշնամու դիրքերը: Արտակարգ էին Անդրանիկի այդ խիզախությունները: Գնդակները չորս կողմից վզգում էին, բայց երբ իրեն զգուշացնում էին, նա պատասխանում էր. «Թուրքի զնդակը մեզ չի վնասիլ, ան կույր է...»: Սրանք մեծ զորավարի բառերն էին, որոնք նա հաճախ էր օգտագործում:

Ոչ թե արշավում, այլ թռչում էր նա՝ Ասլանի բաշն գրկած: Զրեղեն ձին կարծես զգում էր գնդակների տարափի ուղղությունը, այնպես էր իր մեջքին տանում տիրոջը, որ գնդակներն անհետանում էին նրա հմայքից ու արհամարհանքից: Ասլանը լավ մարզված էր: Տեսնում եւ զգում էր այն տարածքը, որի վրայով սլանում էր: Նրա համար դարուկստ չկար, քար ու ժայռ չկար: Երբեմն էլ մարդիկ մտածել են, թե զորավարն իր սուրը ամուր մտցնում էր ամպերի մեջ ու նրանից ամուր բռնած, երկու ոտքերով Ասլանին բարձրացրած՝ տանում էր, ու երբ հարվածելու կարիք էր լինում, հզոր բազուկով ամպերի միջից հանում էր իր սուրն ու ահեղ որոտի նման գարկում թշնամուն: Չարկում-չարդում էր, կրկին բարձրանում ու էլի գարկում: Էլ հոգնել չկար, ահ ու վախ չկար: Մի զգացմունք կար՝ ազգ ու հայրենիք, որ սերն էր նրա ու արդարությունը, որ ուժն էր բազկի, իսկ նրա Ասլան ձին իր մայր հողից հանված պղնձի ու կապարի խառնուրդից էր ծուլված, դրա համար էլ թշնամու գնդակները, նրան դիպչելով, գրնգրոցով ցած էին թափվում: Այսպես անխոցելի էր Ասլանը, ինչպես անխոցելի ու անառիկ էր նրա հեծյալը՝ քաջն Անդրանիկը:


Մեծ զորավարի մասին ականատեսները գրել են, որ երբ նա ճակատամարտից հետո իջել է իր Ասլանի թամբից, թափ է

տվել զինվորական շինելը, նրա վրայից զրնգոցով գետին են թափվել արծճի կտորտանքները: Պատմում են նաեւ, որ երբ Ասլանը տեսնում էր իր տիրոջը, սկսում էր խրխնջալ եւ ոտքերը գետնին խփելով՝ պար գալ եւ այնքան ժամանակ, մինչեւ իր մեծ զորավարը մոտենում եւ շոյում էր իր Ասլանի արծաթի պես փայլատակող բաշն: Ասլանի աչքերը փայլատակում էին, նա վրնջացնում էր ու շրթունքները մոտեցնելով տիրոջ բաճկոնին՝ փնջացնում էր, կարծես փարվել էր ուզում նրա ոտքերին: Այնուհետեւ գլուխը հպարտ վեր էր բարձրացնում, նայում չորս կողմը, եւ թվում էր, թե նա իր պաշտելի էակին ներկայացնում է շրջապատին՝ սիրահարված համրի նման, եւ կարծես ասում էր՝ տեսե՛ք, թե ով է իմ տերը: Ասում են, որ երբ առաջին անգամ մեծ զորավարը հյուրընկալվել է Ասլանի նախկին տիրոջ մոտ, որ դեռ թամբ չէր դրել Ասլանի վրա, Ասլանը իր երանակից անջատվել է, վազքով եկել-կանգնել մեծ զորավարի կողքին ու վրնջակով-փնջացնելով սկսել է խաղալ ոտքերի վրա: Այնպիսի տապալորություն է եղել, որ կարծես նա վաղուց էր սպասում քաջին: Բոլորը ապշած այդ տեսարանին են նայել: Ասլանի տերը, որ չափազանց մեծ հարգանք էր տածել զորավարի հանդեպ, ուրախացած գլուխ է տվել ու, ձեռքերը կրծքին դնելով՝ որպես ջերմ հարգանքի նշան, խնդրել է զորավարին, որ չմերժի իր առաջարկը եւ Ասլանին ընծա ընդունի: Չորավարը մեծ երախտագրությունով եւ հարգանքով է ընդունել նվերը եւ ինքն այդտեղ էլ, առանց վարժեցնելու, կարգադրել է թամբել Ասլանին:

Սովորաբար, անվարժ մտույզը երբեք միանգամից եւ մեկ օրում չի ընդունում թամբն ու սանձը, սակայն այս անգամ Ասլանը գարմանակի հեզությանը է ընդունել երկուսն էլ: Բոլորը քար կտրած սպասել են, թե երբ է քաջ Անդրանիկը իր նոր մտույզը հեծնելու:

Մեծ զորավարը ոչ ոք գնդակներ կեցվածքով ու քայլվածքով է մոտեցել Ասլանին ու, ոտքը ասպանդակին դնելով, բազում թամբին: Խրխնջացել է Ասլանը, թռչկոտել են ծառս է եղել՝ կանգնելով հետեի ոտքերի վրա, սակայն երբ ուղղացվել էր հզոր բազուկով բռնել է սանձն ու իրեն քաշել, շոյել մտույզի պարանոցը, Ասլանը հանդարտվել է ու տեղում սկսել դոփել գետնին. կարծես թե ցանկացել է ասել՝ թույլ տուր թռչնե՛մ դեպի Սասնա սարերն ու թեզ մեջքիս առած երկինք բարձրանա՛մ:

Սակայն հարզի չէր, որ փաշան առանց երախտի խոսք ասելու հեռանար: Շատ թեթեւ ցատկով նա իջել է թամբից եւ երախտի մի քանի խոսք ասելուց հետո մտույզի սանձը հանձնել իր ձեռքերին, իսկ ինքն ստեղծ իր նախկին ձիու վրա եւ այդպես էլ բաժանվել Ասլանի տիրոջից:



Այդ օրվանից մինչեւ իր կյանքի վերջը նրանք անբաժան ընկերներ դարձան եւ բազմաթիվ ճակատամարտերի մասնակցեցին: Ճակատամարտեր, որոնք Գեորգիեյան առաջին (ոսկյա), երկրորդ (ոսկյա), երրորդ (արծաթյա) եւ չորրորդ (արծաթյա) խաչերով ու Գեորգիեյան սրով փառաբանվեցին: Իսկ մինչ այդ հայ ուղղացվել արդեն Բալկանյան պատերազմում պարզետարվել էր «Քաջության» ոսկյա երկու խաչերով եւ «Գեորգի Անհաղթ» շքանշանով:

Եվ այս փառապանք ուղին նա անցել էր իր հավատարիմ ընկերոջ՝ Ասլանի հետ:

Քանի-քանի՛ անգամներ իմաստուն կենդանին հրաշքներով փրկվել է շրջափակման օղակներից՝ իր հետ տանելով իր քաջ հեծյալին:

Նա շատ զգայուն էր եւ զգույշ. կանխատեսում էր ամեն վտանգ: Նրանք հասկանում էին միմյանց: Նա այնպես էր լսում ու ենթարկվում իր տիրոջը, որ բոլորը զարմանում էին: Խոսակցություններ էին տարածվել, թե իբր մեծ զորավարը հասկանում է իր մտույզի լեզուն, որ նրանք զաղտնի խոսում են միմյանց հետ:

Ասլանը երբեք չէր զայրացնում իր տիրոջը: Նա հավատարիմ ընկեր էր ու կարգապահ զինվոր:

1919 թվականին մեծ զորավարը Չայաստանի իշխանությունների պահանջով թողեց հայրենիքը, որի համար այդքան մաքառել էր: Նա բռնեց պանդխտության ճանապարհը: Պանդխտության մեջ էլ, հայրենիքի կարոտից, հայ ուղղացվելով 1927 թվականին Ֆրեզոնոյում կնքեց իր մահկանացուն:

Չազարավոր հայրենակիցներ աշխարհի տարբեր անկյուններից եկել էին հրաժեշտ տալու մեծ զորավարին: Գնդակները վրոպայում մասնակցող թափոխ առջեւից ընթանում էր ուղղացվելով աճյունը կրող կառքը: Իսկ դրա առջեւից գլխիկոր, հանդարտ քայլում էր Ասլանը՝ մեջքին՝ ուղղացվելով գետնին: Անդամալի թախիծ կար նրա աչքերում: Քայլում էր՝ աշխարհից բեզարած ու խռոված: Կյանքում առաջին անգամ այդ շքեղ գեներալի տակ նա անշուք էր ու անտեր:

Ականատեսները պատմում են, որ նրա աչքերից արցունքի կաթիլներ էին հոսում ու, գլխիկոր քայլելով, նա անընդհատ գլուխն էր աջ ու ձախ շարժում, կարծես թե ինքն իրեն հարց էր տալիս՝ էսպես ո՞նց կլինի, եւ օրվա համար էր, որ պայքարեցի՞նք... Ինչ իմանար խեղճ կենդանին, որ ազնիվ պայքարի ճանապարհը շատ կարճ է, որ ազնիվները պայքարում են, անագնիվները վայելում, որ հայրենի հողի վրա անգամ շատ ժամանակ նրանք մի գերեզմանի տեղ էլ չեն ունենում, ինչպես վեց տասնյակից ավելի տարիներ չունեցավ հայ ուղղացվելը:


Պատմում են նաեւ, որ իր տիրոջ մահից հետո Ասլանը հրաժարվել է ուտելուց, ու մեկ օր էլ, երբ թղթակիցներ են եկել նկատահանելու լեզենդար զորավարի առասպելական ձին եւ խնդրել են ձիապանին, որ նրան տան ծովափ եւ բարձրացնի ժայռի վրա, Ասլանը հեզաբարո ենթակվել է ձիապանին եւ շարժվել դեպի ծովը, ու երբ հասել են ծովափնայա ժայռին, նա մի պահ աշխուժացել է՝ դառնալով նույն Ասլանը, որ տարիներ վարումնալ մազկուցում էր Սասնա սարերն ի վեր: Արագ բարձրացել է, կանգնել քարափի գլխին, վերջին անգամ նայել դեպի գերեզմանները, որտեղ իր ուղղացվելով անկանակալ հետոն էր ամփոփված, եւ ծառս լինելով՝ քարափից նետվել էր ծովը, իսկ ծովի ափքները, որ իր տիրոջ բազուկների պես հզոր էին, գրկել են նրան ու տարել հավերժության գիրկը:

Կարդա՛ եւ ծանոթացրո՛ւ

Վարժականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը

սկիզբը՝ նախորդ համարում

Մաթեոսյանի հիշյալ հոդվածում կարելի էր տեսնել նաև հետևյալ մտքերը. «Գրականությունը օպորտունիստ է կյանքի հետ (թեկուզ եւ լավ կյանքի հետ), լավի իր դիրքերից. այլապես նա կկորցնէր անվերջ հեղափոխական իր բնավորությունը, կկորցնէր իր կապը կյանքի հետ եւ կմեռներ: Դիմա, երբ մարդկային բանականությունը սանձազերծվել է կաշկանդումներից ու բացարձակ հաղթարշավի է գնում, երբ թվում է, թե աշխարհը հասել է գրականության երազած հեռուներին, գրականությունը ներբողում է կյանքը: Ամենեւին: Գրականությունը փնտրում է մոռումեմտալ մարդուն»: Եվ ապա՝ «Գրականությունը փնտրում է Աստծո մարդուն: Փնտրում է մարդու անաղարտ վիճակը» (նույն տեղում): Այս խոհերը, որոնք իր իսկ ստեղծագործության տեսական հաջող ընդհանրացումներ են, լրացնում են նախկինում նրա արտահայտած որոշ մտքեր՝ շարադրված «Սպիտակ թղթի առջեւ» խոհագրության մեջ: Ի վերջո, լավի դիրքերից անգամ առավել լավի կարող, որ մարդու գոյության հավերժական ուղեկցից է, հանգում է մի հին ու արդար ձեւակերպման, որին հասնում է եւ Մաթեոսյանը. «Գրականությունը աշխարհի ազնվանալու տառապալից ճիգն է: Դա գրականության կոչումն է ի ծնե» (Հ. Մաթեոսյան, Սպիտակ թղթի առջեւ, ԳԹ, 1966, թիվ 42): Այս ամենի իմաստավորումն սկիզբ է առնում ժամանակակից աշխարհում գրողի դժվարին, տառապալից, նաեւ անճանաչ դերի գիտակցումից, որ դիպուկ կերպով ձեւակերպել է նա. «Այս սիրելի-սարսափելի, խելացի-խելագար, հասկանալի-խճճված աշխարհում դաժան բան է մեր լինել, լինել աշխարհի մերկացած նյարդը՝ գրող: Սպիտակ թղթի առջեւ ամեն վայրկյան կարելի է կաթվածահար լինել» (նույն տեղում):



այսօրվա գրականության թերությունը նյութի, փաստի քաղցն է, կամայական վերաբերմունքը նյութին, կյանքին, փաստին» (նույն տեղում): Նա առաջ է քաշում պատկերվող կյանքը միայն իրեն բնորոշ կողմերով ու սկզբունքներով ներկայացնելու խնդիրը: Կյանքը պետք է գեղարվեստական իրականություն դարձնել այն տեսքով, ինչպիսին նա կա եւ ոչ թե վերածել որեւէ տեսության սկզբունքով եւ ներկայացնել վերափոխված տեսքով. «Իմ Գաղտնի-Մուրադի դեմ ինձ պետք չեն գա իմ իմացած ոչ էկզիստենցիալիզմը, ոչ բուդդիզմը, ոչ էլ բիոքիմիան: Իմ Գաղտնի-Մուրադի դեմ ինձ հարկավոր է այն իզմը, որը թաքնված է այդ նյութի մեջ եւ որը պիտի բացահայտվի նյութի յուրացման հետ» (նույն տեղում):

Ոչ թե տեսությունը պարտադրել կյանքին, այլ կյանքից, նյութից բխեցնել այդ տեսությունը՝ ահա նրա սկզբունքային դիրքորոշումը: Կյանքը ներսից, իր հատկանշական շարժումներով, նյութի ընդգրկումով ներկայացնելու (այդ, ներկայացնելու եւ ոչ թե կատարվածի մասին պատմելու) նախապայմաններն են: Ինչպե՞ս ամեն, որ իմ պարբերության շեշտը կարողանա վերցնել նրա ծիր վարձը, քառադրոփը, սրտի պայթյունը, թառանգը. ինչպե՞ս ամեն, որ բնական կարող փոփոխությունների հետ...» (Հ. Մաթեոսյան, Սպիտակ թղթի առջեւ, ԳԹ, 1966, թիվ 42):


Թե՛ այս եւ թե՛ հետագա տարիներին (1973 թվականին «Գրական թերթ»-ում) ծավալված սուր բանավեճը քողարկված կամ բացահայտ ձեւով խոսակցության նյութ էր դարձնում նաեւ մեկ այլ հարց, որ վերաբերում է գյուղագրությանն ու քաղաքագրությանը: Սա նաեւ անչափ կարեւոր խնդիր է գրական հերոսի տեսակը ճշտելու համար: Սակայն, գյուղագրությունը, թե՛ քաղաքագրությունը հարցադրումն առաջին հերթին կարող է առնչվել միայն նյութին եւ ոչ թե գեղարվեստական որակին: Արձակի բաժանումը գյուղականի եւ քաղաքայինի եւ դրանց անտեղի հակադրումն ընդունված է գրականագիտության մեջ. ռուս գրականագետները ոչ մի նվաստացուցիչ կամ դրվատական իմաստ չեն դնում այդպիսի բաժանման մեջ, այլ ուղղակի օգտագործում են նյութի ուղղվածությունը ճշտելու համար. այնպես, ինչպես օգտագործում են նյութի պատերազմական, պատմահեղափոխական, արտադրական խնդրումները: Դա արձակագիրները եւս իրենց ծրագրային ելույթներում ճիշտ էին դնում հարցը՝ գյուղագրությունը համարելով ոչ թե որակ, այլ հայացք իրականությանը: Ամենեւին էլ

ճիշտ չէ գրականության գարգացումը հանգեցնել որեւէ տեսակետի. դա կարող է լինել սոսկ նախասիրություն, բայց ոչ հարցի գիտական եւ ստեղծագործական բացատրություն:

Իրավացի էր Պետրոսյանը, երբ գրում էր. «Տարիներ շարունակ մեր գրական մասնուլից եւ ասուլիսներից եւ այն տպավորությունն են ստացել, որ նորարարության եւ ավանդականի վերաբերյալ խոսակցությունը ըստ էության դառնում է գյուղի եւ քաղաքի մասին գրված երկերի հակադրում: (Փակագծում ասեն, որ ես չեմ ընդունում գրականության նման տեսակավորումը, քանի որ եղել է եւ կա միայն գրականություն եւ ոչ գրականություն: Բայց մեր արձակի փաստական վիճակը առայժմ հիմքեր է տալիս այդ բաժանման համար, քանի որ որոշ գրողներ գրում են առավելապես գյուղական միջավայրի մարդկանց մասին, որոշ գրողներ՝ առավելապես քաղաքի») (Վ. Պետրոսյան, Գրականագրության բազմաթիվ անհայտներով, էջ 350): Մաթեոսյանն այդ հարցին պատասխանում է այսպես. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին» (Հ. Մաթեոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին, ԳԹ, 1968, թիվ 37, 13 սեպտեմբեր): Լայն առումով, ըստ էության ճիշտ պատասխան, որովհետեւ, ի վերջո, անկախ նրանից, թե ինչի մասին է գրում գրողը՝ 4-5-րդ դարերի պատմության, եղեռնի, գյուղի, թե քաղաքի, կարեւորը նրա գրական շնորհքն է, ժամանակակից մտածողությունը, երեւութների մեջ խորանալու հմտությունը, որոնք եւ գրական արժեք ստեղծելու հիմնական նախադրյալներն են:

Օրինակներ որոնելու համար հեռուն գնալու հարկ չկա. հիշենք միայն Զամաստեղին, Ակսել Բակունցին, Գակոբ Մնձուրուն: Այս հարցի վերաբերյալ ճիշտ դիրքորոշում ունեն մաեւ մյուսները, երբ նշում են, որ գյուղի մասին գրել՝ չի նշանակում գրել չգարգացած գյուղացու մակարդակով: «Քաղաքայինը, ըստ իս, արվեստի մակարդակն է ու կուլտուրան եւ ոչ թե թեման կամ օբյեկտը...» (Պ. Չեչոնցյան, Սրո՞ւմ, թե հաշտեցում: Զամաստեղ, «Գարուն», 1968, թիվ 8, էջ 14),- գրում էր Պետր Չեչոնցյանը: Զամաստեղն կարծիքի էր նաեւ Գեւորգ Արշակյանը. «Գյուղի մասին պետք է գրել մեր դարի, մեր վաթսուներկու թվականների մարդկային փոխհարաբերությունների խորքից: Իրականում <...> գյուղի մասին գրվում է «ավանդությանը» եւ ոչ ժամանակի ճշմարտությունը պեղելով: <...> Իմ կարծիքով այսօրվա գյուղի մասին պետք է գրել քաղաքացու նման եւ ոչ թե գյուղացու...» (Գ. Արշակյան, Աշխարհի հետ բանականությանը, ԳԹ, 1968, թիվ 35): Այս կարծիքների մեջ օգտագործված «քաղաքի չափանիշ», «գրել քաղաքացու նման» արտահայտությունները կիրառվում են որպես գեղարվեստական բարձր մակարդակի բնորոշում եւ ոչ թե որպես քաղաքի հակադրություն գյուղին:

Քաղաք, թե՛ գյուղ հարցադրման մեջ կարեւորը հերոսի ընտրությունն է, հերոսի ներաշխարհի վերաբերման սկզբունքները, պատկերվող նյութի կարեւորությունը, կյանքի հարստությունը բացահայտելու կարողությունը, գրական տարողունակ կերպարներ ստեղծելու հմտությունը: Եվ բացի դա, չպետք է երբեք իրար հակադրել այդ երկու եզրերը, որովհետեւ մեկը մյուսի սկիզբն ու շարունակությունն են: Պետք է ուղղակի կարեւորություն տալ ժամանակակից կյանքի էությունը ճիշտ բացահայտող վիճակների, հարցադրումների եւ հերոսների հայտնաբերմանը: Երիտասարդ արձակագիրների բանա-



վեճի թունդ պահին լույս տեսած Մահարու «Այրվող այգեստաններ» (1966) վեպն այս տեսակետից կարող էր շատ օրինակելի լինել: Սուրաբիանյան եղբայրների գործունեությամբ նա պատկերում է եւ գյուղը՝ Էրմանցը (Մխո-Մխիթար), եւ քաղաքը՝ Վանը (Օհանես աղա, Գեւորգ), եւ մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը (Զամբարձում):

Ի տարբերություն գրականության պատմության համար անհիշատակ որոշ գրողների, ովքեր սոսկ տեսաբանում էին օրախնդիր հարցին Մահարու պատասխանեց բարձր գեղարվեստով:

Մեր ժամանակները բարդ, բազմաշերտ վիճակների ու հարաբերությունների մեջ են դնում մարդուն. իհարկե, անմտություն է ասել, թե այդ վիճակներն ստեղծվում են միայն քաղաքում, որ գյուղը հեռու է այդ ամենից. գյուղում տարբեր բեկումներով են այդ վիճակներն ու համապատասխան հոգեբանական հարաբերություններն ու առնչությունները ձեւավորվում: Բոլոր դեպքերում մեր ժամանակների խճճված հանգույցները գտնվում են ոչ այնքան գյուղական կամ քաղաքային իրականության երկրորդ շարքի ներկայացուցիչների մեջ, որքան այսօրվա կյանքի առավել խոր, առավել սուր ու արդիական զգացողություն ունեցող հերոսների: Ուրեմն, հարցը ոչ թե գյուղը կամ քաղաքն է, այլ հերոսը, որով եւ բացահայտվում է կյանքի էությունը: Այս առիթով անհնարին է չվերհիշել Պարույր Սեւակի «Զամուն եւ ընդդեմ «ռեալիզմի նախահիմքեր»-ի» հոդվածի ճիշտ դիտողություններից մեկը. «Վաղուց է եկել ժամանակը մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն հերոսի՝ լինի դա քաղաքական հերոս, թե հերոս վեպ ու վիպակի» (Պ. Սեւակ, ԵԺ, V, 1974, էջ 260):

Գրողի խորքային բուն էությունը սա՛ է, քանի որ այդ «մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն» հերոսն ավելի տարողունակ ու խոր հայացքով է նայում իր ժամանակին, քան այլ կարգի հերոսները: Անկախ նյութից, որովհետեւ լավ գրողի համար կարեւոր ու անկարեւոր, գլխավոր ու երկրորդական նյութ լինել չի կարող, հիմնական խնդիրն այն է, որ եւ գրողը, եւ նրա հերոսներն իրենց մեջ կրեն դարի գարգացման աստիճանը: Եվ առաջին հերթին գրողը պետք է կրի իր մեջ այդ որակները, որովհետեւ, ըստ էության, ինքն է իր գլխավոր հերոսը, իր աշխարհաճանաչողությունն է իր խոսքի հիմնական նյութը: Բացի դա՝ նրա հերոսները միանման լինել չեն կարող, իսկ գրողը պարտավոր է նրանց կյանքն ու ներաշխարհը բացահայտել ժամանակի բարձրակետից:

(Հարունակելի)

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր







Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Երեւանի և Արթուրյան անվան հ. 2 հիմնական դպրոց» ՊՈՒԱԿ-ի անգլերենի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար...
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Տավուշի մարզի «Սեւքարի միջնակարգ դպրոց» ՊՈՒԱԿ-ի մաթեմատիկայի (34 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Կոտայքի մարզի «Արթուրյանի և Վանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց» ՊՈՒԱԿ-ի ռուսերենով ուսուցմանը դասարանների դասավարի (2 մասնագետ, 17 եւ 10 դասաժամ), ֆիզիկայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Շիրակի մարզի «Կաքավասարի տարրական դպրոց» ՊՈՒԱԿ-ի դասավարի (23 դասաժամ), անգլերենի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Սյունիքի մարզի «Տորունիքի հիմնական դպրոց» ՊՈՒԱԿ-ի զինվելի (0,5 դրույթ) թափուր տեղի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։



«Կրթություն» շաբաթաթերթ բաժանորդագրվելու համար դիմեք մոտակա փոստային բաժանմունքներին։



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Կոտայքի մարզի «Արթուրյանի հ. 8 հիմնական դպրոց» ՊՈՒԱԿ-ի և 32-րդ (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Երեւանի և Երես Սեփի անվան հ. 124 հիմնական դպրոց» ՊՈՒԱԿ-ի դասավարի (4 դասաժամ) թափուր տեղի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 ԿԳՄՍՆ «Երեւանի Գ. Մարգարյանի անվան հ. 94 ավագ դպրոց» ՊՈՒԱԿ-ի իմֆորմատիկայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Արարատի մարզի «Նոյակերտի միջնակարգ դպրոց» ՊՈՒԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ), պատմության (3 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։

Գրանցման վկայական՝ 01U-049349, Տրված է՝ 11.01.2001թ. Դասիչ՝ 69312, Հասցեն՝ ՏԻԳՐԱ Մեծի 67, E-mail: krtutun@yandex.ru ԳեՌ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները է նամակները չի գրախոսում և ետ չի վերադարձնում։ Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում։

Տպագրված է «ՏԻԳՐԱ Մեծ» հրատարակչության տպարանում։ Տպաքանակը՝ 2000։ Ծավալը՝ 4 տպագրական մամուլ։ 28.02.2023թ. Գինը՝ 200 դրամ։

Համարի պատասխանատու՝ Գլխավոր խմբագիր՝ Գագիկ ՄԻՆԱՅԱՆ